

Գևորգ Տեր-Գաբրիելյանի «Անաստված» կինոթատրոնը» կինովիպակի քննարկում:
Կինովիպակը տե՛ս հրապարակված այստեղ. <http://hetq.am/arm/news/81070/gevorg-ter-gabrielyan%E2%80%A4-anastvats-kinotatrony.html>

«Ես ձեր պիեսը տեսել եմ, տիկին»

Խոսքապիես երկու մասից

Օգոստոս 17, 2017, ԵՀՀ

Խոսող անձինք

Լուսինե Խառատյան

Դավիթ Հովհաննիսյան

Մարինե Պետրոսյան

Նունե Դիլանյան

Իզաբելլա Սարգսյան

Անահիտ Արամունի Քեշիշյան

Գևորգ Տեր-Գաբրիելյան

Արա Նեղոյան

Հրանուշ Խառատյան

Միքայել Հովհաննիսյան

Նելլի Օհանյան

Սոնա Այվազյան

Վարդան Ջալոյան

Սուսաննա Հարությունյան

Էպիզոդներում

Մաշայի քույր

Միսաք Խոստիկյան

Նվարդ Մանասյան

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

00:04 **Լուսինե Խառատյան.** - Շատ ուրախ եմ, որ էսօր էսքան մարդ հավաքվեց էստեղ: Հիմա հարթակը կբացվի. բոլորը, ովքեր կարդացել են, էստեղ հնարավորություն կունենան կիսել իրենց մտորումները, բայց ես ուզում եմ մի քանի կարևոր բան առանձնացնել էս պահին: Իմ կարծիքով էս տեքստը ակտուալ է հենց էսօրվա մեր կոնտեքստի համար, քանի որ, եթե հետևեք էն քննարկումներին, որոնք կան, ինքը շատ-շատ տարբեր շերտեր է բացում: Ընդ որում շերտեր, որոնցից ամեն մեկը մի առանձին կարող է նույնիսկ պատմվածքի, գրքի ու հոդվածի նյութ լինի, ու էդ առումով է շատ հետաքրքիր: Իմ կարծիքով ինքը իսկապես առնչվում է երեք շատ կարևոր բաների. տարածք, ժամանակ ու մարդ, ու էդ բոլորը էդ գրքում կան: Ընդ որում որքան էլ որ գեղարվեստական են, էնքան էլ իրական են էդ ամեն ինչը, ու էսօր մենք ունենք էդ տարածքը. դա քննարկումն է: Ես այլևս ոչինչ չեմ ասելու: Հարթակը կբացեմ նրանց համար, ովքեր տեքստը կարդացել են ու կուզեն առաջինը արտահայտվել սցենարի մասին:

01:25 **Հրանուշ Խառատյան.** – Էդ շատ բարդ խնդիր առաջադրեցիր դու: Սցենարը նախ և առաջ ենթադրում եմ գեղարվեստական արժեք է: Ես օրինակ լրիվ զրո եմ էդ առումով, բայց ընդհանուր առմամբ ասելիքի մասին ասելու շատ բան ունեմ:

1:40 – Ես սցենար կոչեցի, որովհետև հեղինակը ինքը պայմանականորեն դա կոչել է սցենար. դա շատ պայմանական անուն է, չէ՞, էս էդպես հասկացա. բայց ինքը սցենար չի:

1:49 **Վարդան Ջալոյան.** - Չէ, սցենար չի կոչել: Ինքը... Դա կարելի է անվանել գրավոր ֆիլմ: Ինքը ֆիլմ է անվանել, ճիշտ է, կինո է անվանել:

- Հա, ինքը շատ վիզուալության...

2:03 **Վարդան Ջալոյան.** - Որպեսզի տեքստը կարևորագույնը հագեցած լինի վիզուալով: Էնտեղ կա լուսանկարի տեքստ, օրինակ: Եվ կա իդեալական տեքստ ու գրական տեքստ: Եթե անունը դրել էս կինո, դա չի նշանակում որ կինոն դառնում աս գրականություն ու գրականությունը դառնում աս կինո:

Եվ էստեղ, ասենք թե, ակտուալ է շատ կարևոր պատճառներով: Նախևառաջ, առաջին գուգահեռները, որ ուզում եմ անցկացնել, դա իհարկե Շալամովին և Սոլժենիցինին ենք հիշում: Ես իրանցից կսկսեմ: Եվ իհարկե, ասենք թե, մենք տեսնում ենք, որ գոյություն ունի ճամբարային, էսպես կոչված, գրականություն, չէ՞, որտեղ որ չափազանց դժվար է, ասենք, էդ երևույթը մտածել: Նույնը ինչ որ հրեաների համար.

ինչպե՞ս նկարագրել կամ ինչպե՞ս կինո նկարել հոլոքոստի մասին, օրինակ. և դա իրենց համար մեծագույն պրոբլեմն է: Էստեղ ես կուզենայի որպես հիմք վերցնեինք Շալամովի նշանավոր էդ խոսքը, որ ինքը ասում է. «Ոչ թե փաստ է արձակի մեջ, այլ տառապանքով ապրված փաստ»: Այսինքն՝ ոչ թե արձակ, այլ որպես տառապանքով ապրված փաստ: Եթե գիտեք Շալամովի կենսագրությունը՝ ինքը եղել է ձախ ԼԵՖի անդամ, տրոցկիստ, ու դրա համար ամբողջ կյանքը նստել է: Ինչո՞ւ համար ձախ ԼԵՖի. որովհետև մեկը կհիշի, ասենք, քսանական թվականների գրականությունը կամ ճարտարապետությունը, որովհետև հերոսների հիմնական մասը, ասենք, էդ քսանական թվականների պահին են ստեղծագործել, ասենք՝ կոնստրուկտիվիզմ և այլն, և այդ թվում՝ Չարենցը: Ինքը խոսում է «Երկիր Նայիրի»-ի մասին, այսինքն մի տեսակ հնարովի, գեղարվեստական հայրենիքի մասին, և ինքը խոսում է, ասենք, ինչ-որ իրական Հայաստանի մասին, փաստական Հայաստանի մասին: Այսինքն արդեն Չարենցի մոտ փաստականի ու մյուսի էդ հարաբերությունը՝ գեղարվեստականի հարաբերությունը, խիստ հուզական է: Եվ իրա՞ Շալամովի համար միշտ խնդիր է եղել: Նույն ձախ ԼԵՖը, որն ասում էր. «Էդ ամբողջ բելետրիստիկան, որ պտտվում է գլխավոր հերոսի շուրջը, չգիտեմ, ինչ-որ պատմությունների շուրջը», հրաժարվել է պատկերելուց... Մեկ ուրիշ մի բան կա... Այսինքն այդ կոպեռնիկյան բանն է ասում՝ հեղաշրջումն է ասում...

Մարինե Պետրոսյան. - Լավ ա, գիտական խոսք ա, բայց կարող ես... Որովհետև ես մի հատ միտք ասեցիր ու էդտեղից ուզում եմ խրվեմ, էլի, ուզում եմ դրան անդրադառնամ:

Ջալոյան. - Դու իրավունք չունես խրվելու:

5:31 – Չէ, չէ, մի քանի հստակեցում: Կներեք, կներեք:

- Որպես մոդերատոր մի քանի հստակեցում. եկեք ժամանակ որոշենք...

Մարինե. - «Խրվել» նկատի ունեի՝ մտքին ուզում էի անդրադառնամ:

5:56 **Լուսինե.** - Մի երեք րոպե ժամանակ առաջին կարծիքի համար, հետո էդպես կզնանք. մաքսիմումը երեք րոպե, ես ժամանակը կպահեմ:

6:07 **Ջալոյան.** - Ուրեմն նախևառաջ էդ երկու խնդիրները... Հայ գրականության մեջ... Հանդիսանում են շատ մեծ, խիստ մեծ պրոբլեմներ, որոնք հարկավոր է լուծել... Էս առումով, ինչպես պատմական գիտությունների մեջ, որ էլի կապված է հիշողության հետ, էնպես էլ գրականության մեջ ես տեսնում եմ, որ գոյություն ունեն ոչ ճիշտ մոտեցումներ: Նույնը, կարելի է ասել, սովետիցիայան և շալամովյան մոտեցումները, ասենք թե, ճամբարային էդ փաստի նկատմամբ:

06:49 **Մուսաննա Հարությունյան.** - Մահարու «Ծաղկած փշալարերը» դու համարում ես ոչ ճիշտ մոտեցում:

6:54 – Գիտե՞ք ո՞նց ասեմ. եթե Շալամովի բանաձևին մոտենանք, այսինքն...

6:58 **Մուսաննա.** - Չէ, դա նույն տարիների քո ասած հեղինակները, և՛ Մահարին, և՛ Շալամովը, և՛ Սոլժենիցինը՝ իրանք անմիջական մասնակից են եղել էդ պրոցեսին: Իրանք իրանց մաշկի վրա են դա զգացել: Ներողություն: Գևորգի ազնվությունը էն է, որ ինքը էդ սերունդը չի, որ դա իր մաշկի վրա զգացել է, բայց էդ ցավը ինքը նույնպես ապրում է, և մատուցման էս ձևը ինձ թվում է շատ ճիշտ է ընտրել, որովհետև հեղինակի չեզոքությունը խիստ պահպանված է: Մենք հըրը չենք տեսնում ցավի, ամոթանքի, չգիտեմ ինչ, էսպես ընդգծված բան, բայց ըստ էության էդ ամբողջ ժամանակաշրջանը պատկերացնում ենք:

7:43 **Զալոյան.** - Դե հիմա հարցը հետևյալն է, թե ինչո՞ւ չի կարելի այդ քո էդ զգացմունքներով, օրինակ, ասենք թե, չգիտեմ, ձևափոխել փաստը: Օրինակ, Օտյանը, երբ որ գրում է տասնհինգ թվականի մասին՝ ինքն էլ ասում է, որ «Ես, - ասենք թե, - փաստերը ներկայացնում եմ... ռեալիստական ձևով եմ ներկայացնում»:

8:06 **Մուսաննա.** - Դա ուրիշ բան է, երբ դու ականատես ես, երբ դու դա ապրում ես: Երբ մի քանի սերունդ հետո էդ մասին խոսվում է, դու իրավունք էլ չունես էդքան խեղաթյուրել, եթե քո գործի հիմքում պատմական կամ որևէ փաստ է ընկած: Եթե դա քո կենսագրության մասը չի՝ դու իրավունք չունես դա խեղաթյուրել:

8:25 **Լուսինե.** - Ինձ կներեք, որովհետև էստեղ էլի առարկություն կար կարծես թե, թող միանան խոսակցությանը:

8:30 **Զալոյան.** - Ես ուզում եմ ասեմ, որ, օրինակ, ասենք, դուք շատ սխալ եք գնահատում... Այսինքն դուք նայում եք, որ, օրինակ, ասենք, մարդը գրել է պատմավեպ: Իմ կարծիքով, ասենք թե, մի քիչ էդպես, բան ա էլի՝ դժվար է, ասենք, իրան բնութագրել որպես պատմավեպ:

8:51 **Մարինե.** - Ես ուղղակի կարճ ռեպլիկ էի անում. քանի որ համադրություն կատարվեց հոլոքոստի հետ, ես ուզում էի ասել, որ ինձ համար սա լրիվ ուրիշ խնդիր է, որովհետև հոլոքոստում կա զոհ և կա դահիճ: Էստեղ իրականում, էսպես, տարօրինակը ասեմ, թե յուրահատուկը էն է, որ էդ բոլոր... բոլորը չասեմ՝ մեծ մասը, իրանք միայն զոհը չեն, իրանք էն ժամանակ նաև դահիճ են եղել, հետո են դառնում զոհ, և դա է խնդիրը: Եվ ես անընդհատ կարդալուց իմ մեջ բան կար, որ ես ուզում էի մի քիչ հետ գնալի ժամանակով, որ ես ուզում էի տեսնել՝ էդ ամեն ինչը ո՞նց է սկսել, որովհետև դա՝ էդ ամբողջը վերջն է, հա՞, ոչ թե սկիզբն է: Որտեղից է դա ծագել՝ էդտեղ չի երևում:

- Մենք ուղղակի ձայնագրում ենք, որ հետո սղագրությունն անենք:

09:41 **Դավիթ Հովհաննիսյան.** - Հա, հետո, էս գրքի թեմայից ելնելով, մատնիչները գործում են արդեն... (ծիծաղ) Իմ կարծիքով, էդ համեմատությունը ճամբարային գրականության հետ բացարձակապես անիմաստ է, որովհետև էստեղ ճամբար էս չեմ տեսնում: Ինչի՞ մասին է էս գիրքը... էս գիրքը, իմ կարծիքով, սիրո մասին է հիմնականում: Սիրո մասին է՝ մեր անցած սերունդների, մեր քաղաքի, մեր պատմության. և հիշողության հետ կապված էնպիսի փայփայանք կա՝ որ էդ ամեն ինչը մերն է: Հիշո՞ւմ եք, որ Ավետիսը վերադառնում է տուն, մոր մոտ, մերն ասում է՝ «Տղերքս պրծան... Սատանեն սատկեց գնաց...»: Մոր սերն է, որ... Դաժան վիճակ էր, էդ ժամանակը անցավ-գնաց: Եվ ինձ համար շատ կարևոր է, որ մի լուրջ շերտ մեր քաղաքի պատմությունից, մեր քաղաքի կյանքից վերակենդանացավ, և շատ հետաքրքիր ձևով: Խորհրդանիշներն էին շատ հետաքրքիր: Էնտեղ կան որոշակի իմաստով շատ կոպիտ բաներ՝ ասենք, Ստալինի պողոտայում գանգը... Մի քիչ իմ ճաշակի բան չի, բայց էդ իմ ճաշակն է: Էս ամեն ինչը էս էսպես՝ առանց պատրաստվելու եմ ասում, որովհետև գիրքը մի քսան րոպե առաջ վերջացրի կարդալը, և շատ տպավորված եմ: Ընդհանրապես Գևորգի գրվածքի ոչ բոլորը, բայց մեծ մասը ինձ շատ է դուր գալիս: Իսկ էս մեկը չափազանց հետաքրքիր է, շատ: Ժանրային... մի քանի ժանր է, հա՞. Արիկը ժանրի մասնագետ է. մի քանի ժանրի էսպես միասնություն է էստեղ, շատ բնական, օրգանիկ ձևով է ստացվել: Մեկ էլ էն «թուրքի արյունը» որ մտնում է խեղճ բժշկի մատի մեջ մեռնում է՝ էդ էլ ժամանակակից այլուզիաների, ժամանակակից մտորումների հետ կապված այլուզիա է: Չգիտեմ, դեռ էսքանը, հա՞, երևի: Բայց իմ կարծիքով՝ ճամբար չկա: Կա իրոք սեր այ էս քաղաքի նկատմամբ, որը եկավ հիմա՝ էս է, մենք էլ մկների պալատի կողքն ենք:

12:43 **Մարինե.** - Ողբերգություն գոնե կա, ամեն դեպքում բան չի...

- Իսկ էդ ողբերգական լիրիկա չկա՞ էդպիսի բան... Ո՞նց չկա:

12:56 – Ոնց որ հեղինակը ինչ-որ բան էր ուզում ասել:

12:58 **Գևորգ.** - Չէ, էս ուզում եմ ուղղակի ճշտում անեմ, ժողովուրդ ջան, որովհետև երկրորդ անգամ լսեցի էդ գաղափարը. երևի լավ չի ստացվել: Մատը ճղվում է՝ մեջը ինչ-որ վարակ է մտնում, ասենք՝ օդից. հակասանիտարական իրադրություն է:

13:12 **Դավիթ.** - բոլորը հասկացան, որ էս սադրում եմ:

-Ես չհասկացա ճիշտն ասած:

- Պարզ սադրանք է. «թուրքի արյունը» մտավ մեջդ՝ պիտի մեռնես, բա ի՞նչ պիտի անես:

13:23 **Հրանուշ Խառատյան.** - Ես մի քիչ հակասական վիճակում եմ, էս շատ ուզում էի էսօր մի հատ էլ վերընթերցել, նոր գալ էստեղ, բայց էսօրվա հանգամանքները ինձ թույլ չտվեցին: Կարդացի՞ երբ հայտնվեց էլեկտրոնային վիճակում, ցանցերում, և

կարդացի՝ հենց առաջին երկու էջից հետո զգալով նախատրամադրվածություն: Այսինքն ես ունեմ սուբյեկտիվիզմ: Ես կարդում էի թե՛ Գևորգի ընտանեկան անցյալը տեսնելով, կարդում էի թե՛ իմ սաղ օրը կարդացած էս նյութերը տեսնելով, ասենք, Սահակ Տեր-Գաբրիելյանի կերպարի: Ամեն մի հիշատակությունը կարդալիս... Ես իր գործը հիմա պատրաստում եմ հրատարակության: Կարդում եմ Պողոս Մակինցյանի վկայությունը նրա մասին, Դրաստամատ Սիմոնյանի վկայությունը նրա մասին: Էս բոլորը իմ մեջ առաջացրել է մի շատ ծանր նստվածք, որ ես չկարողանամ հիմա արժեք տեսնել, որովհետև անընդհատ պակասող բաներ էի փնտրում ու տեսնում: Այսինքն՝ ինձ անընդհատ թվում էր, որ պետք է էս մասին գրվի. գեղարվեստորեն՝ այո՛, տեսականորեն՝ այո՛, վերացական՝ այո՛, ընդհանրացված՝ բայց պետք է լինի (իսկ դա չկա): Ես էդպես եմ ուզում տեսնել, և էս պատճառով ինձ թվում է, որ մեր էս կարգի, էս կասեի... պարոն Ջալոյանի նման ընդհանրացնելով ասեմ.

հայկականության էս գործերում մի մեծ պրոբլեմ կա: Դա այն է, որ եթե մարդ ուղղակի կոնտեքստի մեջ չէ՝ շատ բաներից տեղյակ չէ... Այսինքն՝ մենք գրելիս, մեր կոնտեքստի մասին գրելիս, միշտ չենք հաշվի առնում էդ կոնտեքստը չիմացողի ընկալման տարբերակը: Ես անընդհատ ինձ դնում եմ, փորձում էի դնել՝ չէի կարողանում դնել մի մարդու տեղ, որ չգիտի, խոսքը ինչի՞ մասին է, և ի՞նչ պիտի ինքը զգա... ի՞նչ ապրում պիտի տանի: Հիմա Դավիթի ասած Երևան քաղաքի և Հայաստանի անցյալի սերը և մարդկանց մասին...

15:21 **Դավիթ**. - Բայց նաև... Բայց նաև անաստվածությունը ինչ վատ բան է: Իսկ ամենաշատը...

Հրանուշ Խառատյան. - Ախր էս ամբողջը՝ անաստվածությունն էլ է սեզմենտ, որը լրիվ չի բացված: Աստվածությունն էլ է սեզմենտ, որը լրիվ չի բացված: (- Ախր ինչի՞ պիտի բացի:) Բան չունեմ ասելու, էս հարց եմ դնում: Օրինակ՝ էս փնտրում էի դա, էս ամեն տեղ փնտրում էի Բերիային: Էդ շրջանի մասին գրել ու Բերիա չլինի, իմ կարծիքով, շատ վատ է:

15:56 – Ամեն մեկը իր...

Հրանուշ. - Ես կրկնում եմ. այդ մարդկանց, հենց թվարկված մարդկանց՝ Կոջոյանի, նույնիսկ Սարյանի էլ, չնայած ինքը անմիջական զոհերից չի, բոլորի ճակատագրերում, բոլորի երեկոյան խոսակցություններում, բոլորի կյանքում՝ Թամանյանի կյանքում անգամ, որը երեսունվեց թվի հունվարին մահացավ, չհասցրեց ընկնել մսաղացի տակ, բայց բոլորի կյանքում Բերիայի տեսանելի ներկայությունը շատ կարևոր էր: Մարդկանց ներքին հարաբերությունները Բերիայի առկայության գաղափարի վրա էր խարսխվում. խոսե՞լ, թե՞ չխոսել, ասե՞լ, թե՞ չասել, ինչպե՞ս տեղ կհասնի, ի՞նչ կաավի և այլն: Եվ ինձ թվում է, էս կարգի գործը, որ իմ ընկալմամբ էսօր շատ համարձակ գործ է... Համարձակ է էն իմաստով, որ պանորամնի է, բայց պանորամնի լինելով իմ համար լիքը բաց տեղեր կա: Եվ էս կարծում եմ, որ էս

համարձակությունը վերցնելուց հետո հիմա պիտի ճնշումներին դիմանալ՝ ինչի՞ է սա
բաց, ինչի՞ հենց թեկուզ Սահակ Տեր-Գաբրիելյանը... Ի դեպ, ես չգիտեմ, տեղյակ եք, թե
չէ, վերջերս՝ մի երկու շաբաթ առաջ ես իմացա, որ, երբ որ... Ով որ չգիտի՝ ասեմ.
Սահակ Տեր-Գաբրիելյանը, ենթադրվում է, որ կա՛մ չորրորդ հարկից իրան ԿԳԲ-ի
զցել են ու ինքը մահացել է, կա՛մ ինքն է նետվել և մահացել է: Մի կին, և ես հիմա
իրան պիտի ձայնագրեմ, պատմեց, որ իր մայրը՝ բժշկուհի, հենց ընկել է մարմինը
մայթին, մոտեցել է, պուլսը չափել է, սիրտը աշխատելիս է եղել, կանչել է օգնություն.
«Օգնեք, օգնեք, մարդը կենդանի է»: ԿԳԲ-ից դուրս են եկել, շրջապատել, դուրս արել,
ասել. «Մի մոտեցեք», մինչև մեռնի: Իմ կարծիքով սա բավական ապացույց է, որ իրան
զցել են, այնուամենայնիվ: Եվ այս կարգի մանր, այսինքն՝ էսօրվանից, քսանմեկերորդ
դարից թվացյալ հեռու հիշողությունները գալիս են նորից էս մարդկանց հետ: Սահակ
Տեր- Գաբրիելյանը, ի վերջո, շատ բանալի կերպար է էս ամբողջի մեջ:

18:05 **Դավիթ**. – Քեզ վերադարձնեմ գեղարվեստականին: (- Չէ:) Ո՞ր հերոսը
ամենաշատը դուրըդ եկավ:

Լուսինե. - Հա, ճիշտ է, գեղարվեստական առումով:

18:14 **Հրանուշ**. – Ես հենց էս եմ ասում, ես բոլորի նկատմամբ պրետենզիա ունեմ:

18:17 – Դու մեկի ազդեցության տակ ես:

18:21 - Էդ ժամանակը կարիք ունի համակողմանի ներկայացման:

18:28 – Բայց ո՞ր հերոսը դուրըդ եկավ՝ չասիր:

18:30 – Չգիտեմ:

18:32 – Դե էդ ա էլի, որ... Գիրքը տենց չես կարդացել, սխալ ես կարդացել:

- Ես հենց խոսք վերցրեցի՝ ասացի, որ այդպես չեմ կարդացել:

18:42 – Դու սանամեր ես, ինչ ուզես՝ կանես:

18:47 **Նունե Դիլանյան**. - Սուս մնացեք: Ուրեմն, ես մի քիչ կարող է խառը խոսեմ,
որովհետև ես էլ մի քանի րոպե առաջ եմ վերջացրել գիրքը ու ավելի շատ էն
ամենաառաջին բանն ա էլի: Իմ կարծիքով, էս Հրանուշի ասածի վերաբերյալ, իմ
կարծիքով սա մենակ հայկական իրականության մասին չի: Հայկական
իրականության մասին լինելով՝ ինքը շատ «ներգրավային» է, այսինքն՝ գիրքը
կարդալուց, չգիտեմ, երևի բոլորը անդրադարձել են իրանց սեփական ընտանեկան
պատմություններին, ի՞նչ են լսել, ի՞նչ դժվարություններով են անցել և այլն: Բայց ինքը
էնքան էլ հայկականի մասին չի, որովհետև էն խնդիրները, որոնք, իմ կարծիքով,
որոնք էդտեղ առաջ են քաշվում, իմ կարծիքով դիտավորյալ բացթողումներով, դրան
կանդրադառնամ մի քիչ հետո, ընդհանրապես մարդու մասին են: Ու այնպիսի

խնդիրների մասին են, որը մենակ մեզ չեն բնորոշ, ու էդ առումով կարևոր չի դա
Բերիան ա, որը չկա, թե ինչ-որ ուրիշ...

19:53 **Միքայել Հովհաննիսյան**. – Թե՞ Միկոյանն է, որը կա:

- Հա, թե՞ Միկոյանն է, որը կա: Դավաճանության մասին է, վախկոտության մասին է, հարմարվողականության մասին է, սիրո մասին է և էդ առումով բերում է, տանում է և անցյալ, և բերում է մեր օրեր, մեր ներկայի: Մա էդ կապակցությամբ էի ուզում ասել: Եվ են, որ մինչև վերջ չի ասվում, էնտեղ, մի քանի տեղ Գևորգը երաժշտության մասին որ գրում է, գրում է, ասենք, «Մոցարտ կամ նման մի բան»: Այ էդ «կամ նման մի բան»-ը կարծես ընթերցողին է թողնում, և դա ոչ միայն գրքի երաժշտական էպիգոդներն է, էդ «կամ նման մի բան»-ը ցանկացած էպիգոդում ամեն մեկը իրա ձևով կարող է ընկալել, ընդլայնել, հասկանալ, ընդունել, չընդունել և այլն: Եվ վերջինը. շատ չխոսեմ. շատ, ինձ համար շատ վառ պատկերներ կան, որոնք տեսնում ես ֆիլմի ձևով: Էդ կեսարյան հաստումը, որ անում է ու են թեք գիծը ձախ պտուկից թե աջ պտուկից, չեմ հիշում: Նույնը երբ որ են շարվող գիծը որ գնում է մարդկանց ու հեռանում է ու էդ Մասիսի եզրերը, էլի որպես պտուկներ, չտեսնված պատկեր է, իմ կարծիքով, և եթե դա երբևիցե ֆիլմ դառնա և լավ ռեժիսոր լինի՝ շատ-շատ հետաքրքիր բան կարող է դուրս գալ: Ու մի քանի... Հիմա ես մի անգամ եմ կարդացել ու շատ արագ, չեմ հիշում, բայց մի քանի տեղ հաստուկ կանգնել եմ, վերադարձել եմ այ հենց էդ պատկերավորության մասին: Ու լեզուն Գևորգի, որը շատ համարձակ է, շատ... Ինքը չի... չի վազում այ էդ «ռաֆինիրովաննի» լեզվի կողմից, ինչը ինձ շատ դուր է գալիս. ու դա էլ է թույլ տալիս քեզ քո ձևով ընկալել, բացել, մտածել, ինչի՞ է այդպես ասել, ինչի՞ ուրիշ ձևի չի ասել. մի խոսքով ինքը բացվող է: Ու ինքը որպես գիրք-ֆիլմ՝ շա՛տ մտորումների տեղիք է տալիս, որպես գիրք-ֆիլմ՝ շա՛տ պատկերավոր է, որպես գիրք-ֆիլմ՝ շա՛տ մեծ պերսպեկտիվա կարող է ունենալ, և ես կարծում եմ, որ էդ ուղղությամբ պիտի աշխատես անպայման, որովհետև են չավարտված ֆիլմը՝ պրոտոտիպի, պիտի գա, ու պապադ երևի շատ ուրախ կլիներ, տեսնելով:

22:28 **Դավիթ**. – Գևորգ, էսպես մի հատ հարց ուղղակի. էն, որ գրել ես «մահվան օղակ», դիտմա՞մբ ես էդպես գրել:

22:35 – Դիտմամբը ո՞րն է:

- «Мёртвая петля» հայերեն «մահվան օղակ» չի:

- Բա ի՞նչ է:

22:40 - «Մահացու օղակ»:

- Հա ջա՞ն:

- «Մահացու օղակ»:

- Դա դիտմամբ չես գրե՞լ:

- Չէ: 22:56 **Գևորգ**. - «Մահվան» ավելի լավ է: Ես գերադասում եմ հայերեն, եթե հնարավոր է, ավելի կարճ տարբերակը, ավտոմատ կերպով՝ ավելի կարճն եմ ընտրում:

23:09 **Հրանուշ**. - «Մահվան»-ը հատուկ նպատակ ունի մահվան տանելու, «մահացու»-ն վտանգի աստիճանն է ցույց տալիս:

- Չեմ համարում, որովհետև շատ հաճախ...

Դավիթ. - Մի խոսքով, դիտմամբ չես գրել...

Գևորգ. - ... Սեռական հոլովը նաև նշանակում է ածական:

23:20 **Հրանուշ**. - Բայց մահվան... Ինքը հենց... հենց մահվան ցանկության բանը՝ առկայությունը տեղին է էս դեպքում:

Նունե. - «Մահացու օղակ»-ը տերմին է, «մահվան օղակ»-ը պատկեր է:

Դավիթ. - Ես դրա համար հարցրեցի, էլի: Ես լրիվ համամիտ եմ:

Հրանուշ. - Այսինքն շատ ավելի հաջող է էս քան թե էն բառացի ճիշտ իմաստային...

Դավիթ. - Դե հա, խորհրդանիշ է... Որովհետև վերջում գնում մեռնում է, չէ...

23:50 **Արա Նեղոյան**. - Ասե՞մ. ուրեմն՝ էլի էս շատ հավանեցի էս ստեղծագործությունը, որովհետև մտնում է ինչ-որ... թույլ է տալիս սկսել մտածել համահունչ ուրիշ, Մարինեն ինչպես ասեց, ուրիշ ժամանակների մասին, օգտագործելով նույն մեթոդաբանությունը, ինչը տվեց հեղինակը: Օրինակ իմ մոտ էսպիսի պատկեր է ստացվում, որ անընդհատ ինչ-որ խանդավառության ալիքներ են պատմական, պատմական-մշակութային մեզ մոտ, որը հաջորդ ալիքը գալիս-ոչնչացնում է, սխալ է հանում: Կարելի է իսկապես պատկերացնել նախորդ ալիքները. ուրեմն՝ առաջին հանրապետության ալիքը նույնպես ինչ-որ...

- Բայց այստեղ չկա խանդավառ ալիքը, չէ՞:

- Էստեղ խանդավառ ալիք է, որը ոչնչացվում է: Ուրեմն այդ Կասյանի... Կասյանի, այսպես ասած, կառավարությունը, և ստեղծագործ մարդիկ, էդ ժամանակվա, քսանական-երեսնական թվականների խանդավառության ալիքը էստեղ ոչնչացվում է: Էդ բեկման պահն է: Բայց մենք գիտենք, որ էդ բեկումից ոչ մի բան չի փոխվում. խանդավառության ալիքը շարունակվում է: Քառասունութին բանը՝ Բեկնազարովը նկարահանում է մի հատ շատ խանդավառ ֆիլմ. ինչպես է ստեղծագործում Սարյանը, ինչպես է Վիկտոր Համբարձումյանը նայում աստղերին, ինչպես է շարունակում

կառուցվել Երևանը, Օպերան է կառուցվում: Այսինքն՝ նույն տիպի... Թատրոններ, բան, այսինքն՝ նույն տիպի խանդավառությունը շարունակվում է, բայց արդեն երևի ինչ-որ ուրիշ ալիք... շարունակում է գոյատևել: Հետո մենք գիտենք, որ գալիս է վաթսունական թվականների խանդավառությունը, որը սպանում է ստալինյան խանդավառությունը. Բեկնազարովին դուրս են հանում Հայաստանից: Որպես ստալինիստ իրեն մերկացնելով: Սկսում է լրիվ նոր տիպի, ուրեմն, ինչ-որ մշակութային փուլ, որը հետո ոչնչացվում է յոթանասունականներին. յոթանասունականների նոր ֆալշ ոգևորության արդեն... մինչև եղեղածները էնքան էլ ֆալշ չեն, ինչ-որ անկեղծության պահ իրանց մեջ ունեն:

25:54 – Յոթանասունականներին ո՞րն էր ալիքը:

25:56 – Ստեղծագործության ատմութեա. որ ինչպե՞ս է, ես չեմ կարող պատկերացնել հիմա, բայց դա փաստ է. ինչպե՞ս է կարողանում Սարյանը և այլ՝ բոլոր ստեղծագործողները, ընդհանրապես ինչ-որ բան ստեղծագործել. բայց կարողանում են: Այսինքն վիճակը իրանց համար դեռ վերջնականապես փակուղային և սուղ չի: Իրանք դեռ տեսնում են ստեղծագործելու հնարավորություն, և նորանոր մարդիկ գալիս և սկսում են ստեղծագործել: Յոթանասունականներին խանդավառությունը դեմիքայնական բետոնային շինարարության խանդավառությունն է և...

մշակույթում էլ կա որոշ... որոշ տիպի խանդավառություն, որը հիմա կարող ենք հետո մանրամասնել, կարող ենք՝ ոչ: Որը, ուրեմն, ոչնչացվում է էլի, անգամ մտնում է արդեն արտահայտված քաղաքական փուլ՝ իննսունականներին, հա՞, երևի, արդեն անկախությունից սկսած: Յոթանասունական-ութսունական, դեմիքայնական փուլի հետ միասնական էին: Հետո ոչնչացվում է նույնպես՝ անգամ ֆիզիկապես, հա՞.

Նաիրի Հունանյանը գալիս է և ոչնչացնում է յոթանասունականների խանդավառության բաներից՝ խորհրդանիշներից մեկին: 27:16 – Եվ էլի ու էլի: Եվ վերջապես մենք հիմա գալիս ենք ոնց որ թե մի ժամանակահատվածի, երբ արդեն այ էլ խանդավառությունը չկա: Ութին, տասին կար հրապարակում, արդեն իբրև ընդդիմադիր երևույթ, և հիմա մի պահ, երբ որ այդ ստեղծագործ խանդավառությունը արդեն բոլորովին չկա, լրիվ արդեն չենք կարող ոչ մի տեղ իրան որսալ: (Դավիթ. – Ռեֆլեքսիայի պահն է, հա՞ :) Եվ մենք իհարկե կարող ենք տեսնել և՛ Գևորգի ստեղծագործությունից, և՛ առհասարակ, որ ամեն անգամ էլ խանդավառությունը ինչ-որ տեղ կրկնօրինակելի էր, հա՞, այսինքն լեյպցիգյան համալսարանի դիպլոմն է պետք պատին կախել, որ երևա թե... Մարքսիստական ինչ-որ ստեղծագործություններ, որտեղ... որոնք... որը Կապյանն էր գրում, հա՞, ինչպես Հրանուշ Մերգենյան գրեց վերջերս ֆեյսբուքում, և որոնք հազիվ թե ունեին իհարկե անգամ մարքսիստական արժեք, բայց այնուամենայնիվ այդ ընդօրինակման, ձգտման, երազանքի, ուրեմն, արտահայտություններ էին: Եվ որ ամեն անգամ, ուրեմն, չի կանում ինչ-որ առանցքին, հա՞, որը իրական լիներ, որը լիներ անկեղծ, իրական, ոչ ընդօրինակելի, ոչ ցուցադրական: Ամեն անգամ ինչ-որ շեղվում է այդ

առանցքից- և էդ առանցքը ոնց որ թե չկա. կարելի է իրան տեսնել միայն այդ չկաած կետերից, հա՞, այստեղ-այնտեղ շեղվելուց, էդ առանցքը, որը իրականում գրեթե արտահայտված չի, կարելի է տեսնել: (29:00 – Որտե՞ղ չկա): Մշակութային պատմությունում. մշակութային և հասարակական պատմությունում. էդ առաջը գտնված չի, շոշափված չի: Շա՛տ-շատ հազվադեպ դեպքերում... Չարենցը իհարկե շատ, իհարկե, հնարավորինս մոտ է եկել էդ առանցքին, բայց Չարենցին էլ իհարկե մենք չենք կարող անվանել լրիվ անկեղծ, հա՞, քաղաքական իմաստով թեկուզ (- Ինչո՞ւ), վերցնելով նրա քաղաքական պատկերացումները: Քաղաքական պատկերացումները ջախջախվում են, հա՞, իրա աչքի առաջ, բայց նա դա չի կարող արտահայտել, որ «Իմ կոմունիստական երազանքները իմ աչքի առաջ կործանվում են, ջախջախվում են, այլասերվում են», ինչ են անում:

29:47 – Ոչ մեկը չի արտահայտում:

- Ոչ ոք չի արտահայտում: Այնպես որ էդ առանցքը մի տեսակ քարակերտ առանցք է, իրականության առանցք է, ու միշտ մենք տեսնում ենք քիչ թե շատ վառ երևույթներ, բայց որոնք այս կամ այն կողմ շեղված են առանցքից, ու հետո դառնում են մասամբ, թեև հարզվում են, որպես մշակութային արժեք, հիշատակ, պատմություն և այլն, բայց գիտակցվում է, որ քիչ թե շատ կեղծ է: Այսպիսի մտքեր, լավ:

30:18 **Նունե.** - Գուցե էդ առանցքը արտահայտված չպիտի էլ լինի:

- Չէ, սովորաբար նորմալ մշակույթներում լինում է:

30:27 – Մի հարց.

Հրանուշ. - Ինձ թվում է, որ մենք ինքներս չենք գտել, այսինքն, պարոն Տեր-Գաբրիելյանը փնտրում է գուցե իր պատկերացումը, բայց մեր հանրային ընկալման մեջ չկա էդ. առանցքը չկա: Նույնիսկ ոչ մեկի, անձի չեմ ասում, երևույթին հականի-հանվանի չունենք՝ չենք անվանել:

30:48 **Մարինե.** - Բայց մի հատ ճշտեմ՝ ինչ առանցքի մասին է: Որովհետև, ոնց որ, ես ուզում էի խնդրել, որ իմ ասածին անդրադառնան, որովհետև ինձ համար կարևոր է, եթե համաձայն եք: Բայց Արիկը կարծես նույն բանն ասեց, հա՞: էդ ամբողջը ինչի՞ց էր՝ էդ ողբերգությունը, էդ մահերը ինչի՞ց էր սկսվել. Ինչ-որ լավ բանի երազից էր, չէ՞, սկսվել ոնց որ թե: Այսինքն մի հատ էնքան լավ բան, որ դրա համար կարող ես մարդկանց սպանել:

Արա. - Բայց որը ժխտում է նախորդը, չէ՞, որը ժխտում է նախորդը:

31:18 **Հրանուշ.** - Ներողություն: Մարինե ջան, ինչի՞ց եք վերցնում, որ եղել է էդ ոգևորությունը և եղել են էդ սպասումները:

- Չարենցը մեկը: Չարենցը հո հենց նենց չէր գժվել-ոգևորվել:

31:28 **Հրանուշ**. - Ես երբեմն մտածում եմ, որ կար էր «հենցնենցը», որովհետև հանրային բանում չկա:

31:34 – Տերյա՞նն ինչի էր ոգևորվել, լավ, Տերյանն էլ հո գիժ չէր...

- Տերյանը արդեն տասնութ-տասնինին ոգևորված չէր, Տերյանը արդեն տեսնում էր... Տասնյոթ թվին ինքը Մոսկվայում էր ու շատ լավ տեսնում էր, ինչ է կատարվում:

31:44 **Դավիթ**. Ժողովուրդ, եկեք չմերժենք, էլի, էն մարդկանց անկեղծությունը, որոնք ոգևորված են եղել: Եղել են, որոնք ոգևորված են եղել, եղել են, որոնք չեն եղել...

Մարինե. - Չէ, ես կարծում եմ. ամեն դեպքում ես չեմ կարծում՝ բոլշևիկները... Որ դուք ասում եք բոլշևիկները էն սկզբից ինչ-որ սրիկաներ էին: Ինչո՞ւ: Ես կարծում եմ՝ իրանք իսկապես երազում էին, և դրա համար է ողբերգություն, որ իսկապես երազում էին, և ի՞նչ դուրս եկավ էր երազից, հա՞: Ինձ համար էս ֆիլմը շատ հետաքրքիր էր, և ի դեպ շատ հետաքրքիր էր գեղարվեստորեն, որպես ֆիլմ: Հենց ֆիլմի նման էլ՝ էր դարասկզբի արագ-արագ ֆիլմերը, հա՞, Բեկնազարյանի, բանի, էն ռուս ռեժիսորը՝ էր ձևի է բան անում, ու շատ հավես է: Բայց բանի առումով՝ մտքի առումով, ինքը էր մե՛ծ պրոբլեմը ոնց որ չի դնում, էլի, չի դնում, չգիտեմ:

32:30 **Լուսինե**. – Ես հիմա պիտի փոխանցեմ, բայց մի բան էլ...

32:35 **Դավիթ**. - Բայց էլի մի հատ հարց, էլի՝ Արիկին էլ, Մարինեին էլ. ձեզ էր գրքի հերոսներից ո՞վ դուր եկավ:

32:42 **Լուսինե**. – Այ ես էդտեղ էի ուզում բերել. օրինակ ինչո՞ւ Մազմանյան, ոչ Թամանյան: Բոլոր ընտրությունները, կարծում եմ, ինչ-որ հատուկ բանով են արվել, թե՞ արվել են, որովհետև էր մարդիկ են...

32:59 **Ջալոյան**. - Մազմանյանը ինքը բան է եղել՝ ավանգարդիստ: Ինչպես Տեր-Գաբրիելյանը: Ավանգարդիստական ամսագրի խմբագիր է եղել...

33:15 – Միաժամանակ ենք բոլորս խոսում:

33:19 – Կներեք էլի՝ հերթով:

Արա. - Իսկ ինչու՞ ես հարցնում:

33:20 **Դավիթ**. - Ես ուզում եմ ստեղծագործությունը քննարկվի...

Հրանուշ. - Չայնագրվում է և թանկարժեք մտքեր են արտահայտվում, եկեք իսկապես հերթով գնանք:

33:32 **Մարինե**. - Ասում են ինչը դուրըդ եկավ, ասեմ ինձ դուր գալու համար... կարող է ես գրող եմ դրա համար, պետք չի որ, ասենք, դրականը դուր գա: Ինձ շատ հետաքրքիր էր, նոր էր, անսովոր էր էն երկու եղբայրները, էն բաները՝ դահիճները. Մարգիսն ու Ավետիսը շատ հետաքրքիր էին... Մարդկային կերպար էր... Եվ մայրը...

33:54 **Դավիթ**. - Ինձ Միկոյանն էլ շատ դուր եկավ: Չէ, լուրջ, շատ հետաքրքիր է տված Միկոյանը:

33:59 **Հրանուշ**. - Միկոյանը ամենամշակված և շատ հստակ կերպարներից է:

Ջալոյան. - Միկոյանը չէ, էն Ղազարը:

34:05 **Լուսինե**. - Մի բուպե, էստեղ վաղուց ուզում են արտահայտվել:

Դավիթ. - Շատ լավն ա, է, էն որ բանից դուրս ա գալի...

34:13 **Ջալոյան**. - Ես կուզենայի ասել, որ էն հերոսները, որ մենք տեսնում ենք՝ Մազմանյանին, Տեր-Գաբրիելյանին և այլն, դրանք, օրինակ, քսանական թվականներին հիմնականում իրենց աստղային ժամը եկավ: Իրենք մասնակցել են հայկական էդ ավանգարդիստական շարժմանը, Չարենցի հետ միասին, չգիտես ինչի մենակ Չարենցն է մեր հիշողության մեջ մնացել: Եվ կատարվեց շատ հետաքրքիր մի բան: Պարզ է, որ, օրինակ, քսանութ-քսանինը թվականի այդ որոշումները ընդդեմ ֆորմալիզմի, որոնք վերաբերում են ինչպես ճարտարապետական կոնստրուկտիվիզմին, էնպես էլ գրականության մեջ, ասենք թե, որովհետև Սահակ Տեր-Գաբրիելյանը գրականագիտական ուրիշ գաղափարներ ուներ, քան թե ընկեր Ստալինը: Եվ ուրիշ բաներ... Դա շատ կարևոր է: Եվ իրանք՝ էդ մարդիկ, պարզապես ստալինյան ժամանակում շատ ավելորդ էին, դիստոնանսի մեջ էին, և իհարկե իրանց վրա կրում էին, ո՞նց են ասում, այդ ամբողջ իշխանության... ռեպրեսիվ իշխանության ամբողջ բանը: Բայց էստեղ շատ հետաքրքիր էր, եթե դու միակ կուլտուրա ես կրում, որովհետև հայկական ավանգարդն իսկապես, չգիտեմ, շատ բարձր նշանակություն ունի իմ համար և կարծում եմ՝ ուրիշների համար էլ... Իմ համար շատ հետաքրքիր է, մարդիկ ապրում են մի միջավայրում, որը շատ թշնամական է, և իրանք կանգնած են բարոյական ընտրանքի առաջ. ինչպես դահիճները, այնպես էլ զոհերը, հա՛: Ինչպե՞ս իրանք պետք է որպես մտավորական իրանք ապրեն: Էս առումով ես կարող եմ համեմատել, օրինակ, երկու հազար տասնյոթ թվականը հազար ինը հարյուր եռեսունյոթ թվականին, միանգամայն համաձայն եմ, որովհետև այդ տեսակի էթիկական դժվարությունը կարծում եմ համեմատելի բան է հանդիսանում: Եվ սա է շատ կարևոր, որ ես որ ասում եմ, որ ճամբարային գրականությունը... կներեք, դրա մասին չէի խոսում (որ սա այդպիսի գործերից է): Ես խոսում էի Սոլժենիցինի այդ պանորամայի կոնսերվատիվ, ոնց են ասում, այդ մոնարխիստական մոտեցումը Գուլագին, և Շալամովի մոտեցումը Գուլագին, որը, ինձ թվում է, հերոսներին ավելի մոտիկ է, որովհետև ինքը Շալամովի նման կենսագրություն ունեն, այլ ոչ թե

Սուլժենիցինի: Եվ իրանք երբեք նույնիսկ ստալինյան դժվար տարիներին չեն հիացել ոչ նացիոնալիզմով, ոչ ցարիզմով, ոչ էլ, կներեք, ասենք, ֆաշիզմի տարբեր արտահայտություններով:

36:54 – Դե ախր էստեղ բնեռային է: Պարոն Գաբրիելյանի հերոսները և իրավացիորեն ընտրված... (- Տեր-Գաբրիելյանի) Պարոն Տեր-Գաբրիելյանի. նրանք գնում են Սիբիրում՝ արքայազնություն, մի ամբողջ քաղաք են կառուցում: Դուք վերցնում եք Շալամովի այն ճամբարը, որտեղ ամենաջարդված, ամենահուզական...

37:16 – Չէ, չէ, խնդիրը վերաբերում է...

- Ես էլ հենց էս ձեր ասածի հակառակն եմ պնդում:

– Շալամովը մի հատ փոքրիկ էսսե ունի, և ինքը գրում է, թե որ սովետական գրականության մեջ կա հանցագործների ռոմանտիզացիա: Եվ ինքը ասում է. «Իսկ էս աշխատել եմ հանցագործներին ցույց տալ, ինչպես որ իրանք իրականում կան»: Ես խոսում եմ Շալամով տեսաբանի մասին, որովհետև հիշատակեցի Շալամովին ոչ թե իր ստեղծագործությունների համար... իր շատ ստեղծագործությունները գիտենք... քան թե այն, որ, ասենք, ինքը եղել է էդ ԼԵՖի տեսաբաններից, այդ ձախ գրականության այդ տեսաբաններից մեկն է ինքը եղել: Եվ էսօր հայտնաբերեցին քսանականների ձախ տեսաբաններ Վոլոշինովին ու Բախտինին, հայտնաբերեցին, ասենք, Շկլովսկուն, որը, ասենք, ձախ եզրից ա եղել, Տրետյակովին և մյուսներին: Ժամանակակից ավանգարդ գրականություն և ավանգարդ արվեստը, ինչքան էլ տարօրինակ լինի, օգտվում է քսանական թվականների այդ մոտեցումներից, շատ ակտուալ, ու ստացվում է, որ մարդիկ չգիտեին, որ Բախտինը, ասենք, քսանվեց թվականին էսպիսի մի հատ գիրք է գրել. «Марксизм и философия языка»: Դիսկուրս անալիզը սարքվել է... իսկ Բախտինը գրել է վաթսույն տարի առաջ իր այդ գիրքը... Եվ երբ փոփոխություն արվեց լեզվաբանության մեջ՝ ստացվեց, որ էդ մարդկանց իդեաններից օգտվեցին: Եվ ոչ ոք չէր կարող Նորիլսկը կառուցել, որովհետև հարկավոր է համատեղել (ավանգարդն ու կլասիցի^օզմը), դրա համար վերցրեցին (Մազմանյանին)... Ու իմ կարծիքով Քոչարն էլ (Գևորգ), նա էլ՝ համաշխարհային նշանակություն ունեցող ճարտարապետներ, արվեստագետներ են եղել:

39:23 **Լուսինե**. - Ուղղակի էս որ հարցը տվեցի. «Օրինակ՝ ինչո՞ւ Մազմանյան, այլ ոչ Թամանյան», կամ, ասենք թե, էդ ընտրությունների հետ կապված՝ դուք ասեցիք, որ քանի որ դրանք ընտանեկան բարեկամներ են եղել, ու ինքը... Հա՞, կարծես թե: Եկեք շարունակենք...

39:35 **Նելլի Օհանյան**. - Ընտանեկան շատ կոնկրետ հիշողություններ են եղել:

- Կոնկրետ իրենց հետ կապվա՞ծ:

39:41 – Այո:

- Այսինքն՝ որքան գեղարվեստական է, այնքան էլ շատ լայն, շոշափելի ակունքներից եկող...

- Հա:

- Ուղղակի Թամանյանը...

- Կենսագրական բան չի ունեցել՝ խնդիր չի ունեցել, ամբողջ ինչ-որ պատկերը...

- Պանորաման ծածկելու...

Նեյի. - Մեր գրականության մեջ ես չգիտեմ ընդհանրապես... Ոչ միայն գրականության մեջ՝ հասարակության դիալոգի մեջ, երեսունյոթ թիվը ոնց որ որ չկա: Բայց էդ երեսունյոթ թիվը (– Չկա, չկա:) ոնց որ և եղեռնը, ոնց որ և բոլոր էդպիսի երևույթները, մարդկանց մեջ կան:

Ինձ համար ամենակարևորը էս գործում, որը ինձ շատ դուր եկավ, էն երկու... Էն ընտանիքը՝ մայր ու երկու տղաները, որոնք մասնակցում են էդ ամեն ինչին: Ու էդ իսկապես էդպես է եղել. մոտիկները: Որովհետև թունավորված են եղել բոլորը, ովքեր մասնակցել են, ովքեր չեն մասնակցել, բայց ամբողջ ժողովուրդը թունավորված է եղել դրանով. մանավանդ էդ տարիների Երևանը: Որ, օրինակ, իմ ծնողները, որ պատմում էին, որ ասում է. «Եթե անձամբ ծանոթ չեիր՝ բոլորին գիտեիր, համենայն դեպս ինչ-որ շրջանի մարդկանց, ոչ թե նրանց, ովքեր որ ինչ-որ ռայոններում, բան՝ Երևանում, Աբովյան փողոց էր ու անգլիյսկի սաղ. որ բոլորին տեսնում էիր, բոլորի կենսագրությունները գիտեիր, բոլորին ճանաչում էիր: Օրինակ, երբ որ ծանոթացավ իմ ամուսնու հետ մամաս՝ ասաց (Չնայած ինքը ծանոթ չի եղել ու սերնդով էլ շատ տարբեր է եղել)... Ասաց. «Աշոտ Հովհաննիսյանին նման է, բայց ավելի... - ի՞նչ ասեց, - ավելի թեթևացրած կերպար», թե ինչ-որ, ինչ-որ մի էդպիսի բան ասեց:

41:47 **Լուսինե.** - Աշոտ Հովհաննիսյանն էլ էր վերջերս քննարկվում:

- Որովհետև աղջիկները, թեկուզ փոքր աղջիկները հիշել են որպես կերպար, ոչ թե իմացել են ոչ իրա գործերը կամ... էդ ժամանակվա: Բայց Երևանը էդպիսի քաղաք է եղել՝ փոքր:

Մարինե. - Ինչքան հիշում եմ Աբովյանով ներքև իջել-բարձրացել են բոլորը, չէ՞, մտավորականները:

42:18 **Հրանուշ.** – Այդ գրքի արժեքավորագույն երևույթներից մեկը հենց էդ ընտանեկան... որոնք թե աղբյուր են, թե նոր լուսաբանումներ են: Ի վերջո ես չեմ պնդում ընտանեկան հիշողության օբյեկտիվությունը, ես ուղղակի շատ կարևորում եմ հիշողությունը թեկուզ երբորդ, չորրորդ սերնդի:

42:41 – Միտք էին ուզում ասել, կներեք:

42:43 **Նեյլի.** - Դուք ասում էիք գրողների մասին՝ Սոլժենիցին: Իսկ ես ուրեմն միշտ նախանձել եմ էդ, երիտասարդ տարիներից, ռուս գրականությանը, որ պատկերացնում ես ամեն ինչ, որովհետև ինչ ուզում ես ուսումնասիրել, ինչ որ քեզ համար հետաքրքիր է, դու կարող ես գրականություն գտնել, ոչ թե գեղարվեստական՝ մեմուարներ: (- Մեմուարներ, հա): Օրինակ տենց ինձ թատրոնն էր հետաքրքրում: Շատ կուզեի, որ հայկական թատրոնի մասին, նու դրա ինչ-որ մի ամբողջ՝ անձնական, մեկը ինչ-որ մի բան է գրել՝ թողել, մյուսը... Բայց դու, եթե հետաքրքրվում ես, կարող ես իմանալ էդ ամեն ինչը, ու քո եզրակացությունները անել: Իսկ մեր գրականության մեջ շատ քիչ է դա: Ենթադրենք թատրոնի մասին արդեն էդ տարիներին Վահրամ Փափազյանի կամ Ջարյանի գրքերը էլի ինչ-որ բան են, բայց միշտ բան են եղել էլի՝ սահմանափակ են եղել: Այ, փոքր ժողովրդին շատ մոտ, գնահատել օբյեկտիվորեն, ու անձնական ինչ-որ բաներից, նույնիսկ կարծիքներից, նույնիսկ բանից հեռու մնալ: (44:01 – Ես շատ եմ հավանում...) Չնայած շատ լավ գրական գործեր են՝ շատ լավ լեզվով գրած, շատ արժեքավոր: Բայց...

44:12 **Զալոյան.** - Ես շատ եմ հավանում ձեր ասածը: Որովհետև օրինակ՝ ինչո՞ւ եմ հավանում ավելի շատ Շալամովին. որովհետև Շալամովը բան է ասում. ասում է՝ ես փրկում եմ էն բանը, որը, ասենք թե, մոռացության է մատնվել: Հետևաբար... «Ես էդ տեսակից եմ նայում»: Մի հատ իրադրություն կա, որ մոռացության է մատնում, և հարկավոր է փրկել այդ մոռացությունից: Եվ էստեղ ընտանեկան պատմությունն է՝ սուբյեկտիվ մոտեցումը չի կարևոր: Իսկ ընդհակառակը՝ Սոլժենիցինը, արդեն երբ որ գրում էր «Գուլագը», ինքը ընդհանրապես որոշակի իդեոլոգիական տեսակետից դատ էր անում... (44:47 - Բայց գիտե՞ք, ես որ «Գուլագը» կարդում էի...) դատ էր անում Խորհրդային Միության վրա. այսինքն՝ կողմնակալ:

44:47 **Նեյլի.** - Ես որ «Գուլագը» կարդում էի՝ առաջին հերթին ուշադրություն դարձրեցի՝ բերում է Սոլժենիցինը. ինչքան անձնական պատմություններ է հավաքել ու ստացել: Հայաստանից հայկական ոչ մի բան չկա էստեղ նշած:

45:09 – Կներեք, էստեղ վաղուց է...

Անահիտ Արամունի Քեշիշյան. - Ճիշտն ասած՝ նյութն արագ-արագ փոխվեց՝ ուրիշ բան էի ասում, բայց հիմա ուրիշ բան պիտի ասեմ: Որովհետև խոսեցինք թատրոնի մասին էլ, գրականության մասին էլ, պարզապես որպես հիշատակում այս բանի, հավանաբար շատերին ծանոթ է կամ ծանոթ չէ, չգիտեմ, Ադասի Այվազյանի, ես կարծում եմ, այդ ժամանակների մասին գրված ամենահետաքրքիր, ամենամեծ լարում առաջացնող գործերից մեկը, որ պիտե է, և բավական ծավալուն գործ է, կոչվում է «Մանչերը»: Եվ հետաքրքիրը այստեղ ի՞նչն է. որ ամբողջ մշակույթի, հասարակության կենսագրական ընթացքն է տալիս: Այսինքն Երևանում ապրող ընտանիք, որ նահապետական, էրզրումցի ընտանիք են և ինչպես տղաները՝ չորս մանչերը, ինչպես են դառնում չեկիստներ, մատնողներ: Եվ ես կարծում եմ, որ

պատճառներից մեկը, որ էդ տեսակ գործերը, որովհետև ուրիշ բաներ էլ հանդիպել են, կարդացել են, բայց «Մանչերը» շատ գորավոր են: Ես կարծում եմ՝ պատճառներից մեկը (որ քիչ են)՝ շատ տհաճ նյութ է, դառը նյութ է: Երկրորդը՝ այս «Մանչեր»-ի մեջ միասեռականի կերպար կա. տղաներից մեկը միասեռական է՝ ամենափոքր տղան, և հենց դրա համար է ստեղծում: Բայց եթե դա, ասենք... դա ամբողջ լարման մի մասն է, բայց հետո դրանք զուգակցվում են միասին: Ի՞նչ են ուզում ասել. դժբախտաբար են գործերը, որոնք... Թե՛ անհատական հուշեր, որովհետև դրսում դրվել են մի քանի մեմորիալներ այս առթիվ: Հիմա անունները չեն հիշում, բայց նրանց մասին մի աշխատանք ունեմ արված... գրված նյութերի մասին: Դժբախտաբար դրանք չեն անդրադարձել, և ես նաև տեսել եմ, որ ինչպես գրադարաններից դրանք տարիներով տարիներով չեն դուրս գրվել: Ես խոսում եմ դրսի՝ սփյուռքի, և նույնիսկ վերջին տարիներին... Ես պարզապես ուզում եմ ասել, որ ինչքան հակադրանք կա էս ամենի նկատմամբ մարդկանց մեջ: Այսինքն հոգեբանորեն մենք դեռ պատրաստ չենք սա ընդունելու: Ես նույնիսկ մի քանի տարի առաջ՝ երևի չորս տարի առաջ, երբ Արմինե Կունդախյան անունով մի պարզ կին, որ այս հարցը իրեն հուզել էր և մարդկանց հետ հարցազրույց էր արել (և կարծեմ Լուսինեն ծանոթ է այդ գրքի հետ): Արմինե Կունդախյանին, գիտեմ՝ Գայանեն (երևի Շագոյան) ծանոթ է: Եվ ներկայացնում էր գիրքը Գլենդելի հանրային գրադարանում, որտեղ ներկա էր մոտավորապես մի հսկա բազմություն՝ մի երեք հարյուր հոգի գոնե: Եվ գրքի ներկայացումից հետո, նյութերի մասին խոսելուց հետո ըմբոստություն առաջացավ ամբողջ սրահի մեջ, և սրանք սփյուռքում ապրող մարդիկ են, այսինքն՝ հայրենադարձված, հայրենաթողածներ՝ հայրենաթողներ, որ. «Ինչո՞ւ եք այդպես դաժան և այդպես վատ ներկայացնում Հայաստանը»: Եվ «Չի՛ կարելի»: Ի՞նչ են ուզում ասել. էդ ինչ որ չկա՝ էն գրողը գիտի: Շատ-շատ վերջին խոսքս որ ասեմ, շատ փոքր բան է: Իհարկե, սա ստալինյան բռնաճնշումները չեն, բայց յոթանասունական թվականների՝ իմ ապրած ժամանակաշրջանը, որ Մարինեն ծանոթ է էդ գործին (գոնե գիտեմ, որ Մարինեն ծանոթ է), մենաթատրոն է, մեր ապրած հուշերը: Հիմնականում այս գործը այնպես, ինչպես որ, օրինակ, իմ մյուս գործերն են ընդունվել՝ սա չի ընդունվում, որովհետև. «Ինչո՞ւ է սա Հայաստանի մասին: Մեզ դուր չի գալիս դառը բաներ Հայաստանի մասին»:

48:45 – Ամբողջական ասեմ, մի նախադասությամբ ասեմ, որ նաև մեր ժողովուրդը դեռ պատրաստ չէ, և գիտնականներն էլ դեռ այնքան պատրաստ չեն: Նոր-նոր է սկսվում, դուռը բացվում այս նյութի մասին խոսել: Սա նորություն է, սա շատ, շատ, շատ մեծ քայլ է, որ հիմա կատարվում է:

49:06 **Դավիթ**. - Ժողովուրդը պատրաստ է...

49:08 – Շատ շնորհակալություն:

49:10 **Սուսաննա**. - Ես իմ վերջին խոսքը ասեմ ու գնամ: Ուրեմն՝ ես էնպես վատ եմ զգում, որ էստեղ խոսում ենք էդ տարիների մասին և չենք շեշտում Մահարու անունը: Նրա ամբողջ կենսագրությունը հենց էդ ճամբարներում անցկացրած, ապրած մարդու կենսագրություն է: Նրա «Ծաղկած փշալարերը», բանը, բազմաթիվ պատմվածքներ, երկու-երեք անգամ արքայազնի և էդ ամբողջ արքայազնի գեղարվեստի վերածած մեր Մահարուն մենք թողել ենք, էստեղ ընկել ենք Սուլթենիցինի... Ըստ էության Սուլթենիցինի գործը չի փայլում որևէ գեղարվեստականությամբ: Պատմական... Դա պատմական վերլուծություն է... Մերը թողած՝ ընկնենք, էսպես, ոգևորված... Հետո բերեք մեր քննարկումն էլ արքայի չվերածենք: Վերադառնանք Գևորգի գործին: Հա: Ուրեմն՝ ես տիկին Նունեի հետ լրիվ համաձայն եմ: Էնտեղ «ֆիլմի ֆիլմի մեջ» երկու-երեք հատված կար, որոնք իրենց գեղարվեստականությամբ ավելի բարձր են, քան ընդհանուր տեքստը, և ես դա համարում եմ գեղարվեստական հնարանք հեղինակի կողմից, որ ուզեցել է ավելի կենտրոնացնի ընթերցողի ուշադրությունը էդ հատվածների և էդ ասելիքի վրա: Եվ նաև տիկին Խառատյանի հետ եմ համաձայն, որ եթե որոշակի գիտելիք չունես պատմական էդ ժամանակաշրջանի մասին՝ շատ բաներ կարող են անհասկանալի մնալ: Թեև էսպես ֆոտոգրաֆիական ճշգրտությամբ պատմել կամ վերապատմել էդ օրերը՝ դա էլ գրականության մեջ առանձնապես, էսպես, իմ կողմից ընկալելի չի: Հա: Ինչ վերաբերվում է ձեր հարցին՝ իմ ամենահամակրելի հերոսը հեղինակն էր, որը էս բոլորը պատմելուց հետո՝ վերջում ասում է. «Եվ այստեղ ծնվեցի ես»:

- Ինքը ամիս հետո:

- Հա, ինքը ամիս հետո: Այսինքն... Այսինքն՝ իմանալով սա, ունենալով իր արյան մեջ, իր պատմության մեջ էս ծանր ժամանակահատվածը, միևնույն է՝ ինքը ծնվեց, և եկել է ապրելու, և ըստ էության առանձնապես, ինչպես ասում են՝ թքած ունի այդ ամենի վրա, մարդու ապրելու և գոյատևելու ուժը, էդպես, հեղինակի կերպարի մեջ էս տեսա, որն ինձ ահագին գրավեց: Էսքանը:

51:34 – Ես ուզում եմ նշել...

Նունե. - Ինքը մենակ էդ ժամանակի մասին չի, է, ախր: Էն, որ ասում է. «Ասենք հազար ինը հարյուր այսինչ թիվ»:

- Ենթադրենք:

- Ես կարող եմ ասել. «Ասենք՝ երկու հազար տասնյոթ թիվ»: Ու շատ ճիշտ գուզահեռներ անցկացնեմ: (- Լուսինե. Այսինքն ինքը ժամանակի մասին չի^օ): Ինքը բխում է կոնկրետ ընտանեկան հիշողությունից, տեղեկություններից, կրթվածությունից, սիրուց և այլն, և այլն, ու հիմնվում է: Բայց ինքը շատ ավելի լայն է: Ինքը կոնկրետ Հայաստանի ժամանակի մասին չի...

52:06 **Նելլի**. - Ու բացի էդ էդ ընտանեկանի վերաբերյալ էլ ինչ-որ տեղ իրոնիկ բան կա:

52:13 **Լուսինե**. - Դե ընդհանրապես իրոնիան կա ամբողջ...

52:16 **Դավիթ**. - Ես չէի ասի իրոնիա, ես կասեի...

Նունե. - Իրոնիա չի, ավելի նուրբ բան ա դա: Ես կասեի, էլի կվերադառնայի նրան, որ շատ մեծ սիրով է, հա՞: Եվ էդ հիշողությունը, որ իր մեջ ա... Ես Արիկի հետ մի բանում համաձայն եմ, իհարկե հիմա ռեֆլեքսիոն ժամանակ է, հա՞: Էդ խանդավառությունների տեսությունը լավն է, կասկածելի է իհարկե, բայց լավն է: Եվ սա հոյակապ գեղարվեստական ռեֆլեքսիա է, սա շատ մեծ սիրով արված... Պատահական չի, որ ինը ամիս հետո ծնվում է, էլի: Վերջիվերջո ինը ամիս առաջ սիրո պակտ է տեղի ունեցել, չէ՞, որ ծնվել է:

53:06 – Ինչ-որ դրսևորում:

– Հա: Եվ էդ... Ու ինձ համար շատ բան էր՝ արժեքավոր էր էն, որ էդ շատ ուղիղ էսպես ասվող բաներ չկան... Որ շատ նուրբ ա արվել... (53:09 – Հրանուշ. Այո, ես լրիվ համաձայն եմ, դա շատ կարևոր է: Մեծ կարողություն է դա): Որ չկա դա: (-

Հրանուշ. Ես նախանձով եմ ես մասին լսում...) Այսինքն ինքը... Պարզ է, ամբողջ մթնոլորտը էնպես է ներկայացված, որ զգում ես հեղինակի վերաբերմունքը: Բայց չկա էդ պրիմիտիվ դատը:

53:44 **Մարինե**. - Բայց ո՞ւմ նկատմամբ լինի դատը, եթե մեղավորը չկա:

53:45 – Ոնց չկա:

53:46 – Չկա:

- Ո՞նց չկա:

- Չկա: Բա ես էդ եմ ասում:

- Բա Միկոյանը մեղավոր չի՞:

53:52 – Միկոյանն է մեղավոր՞ը:

- Չէ՛, Միկոյանը ընդհանրական կերպար է: Սատանան սատկեց. մեղավոր չի՞ սատանան:

- Ո՞վ ա սատանան:

- Ամբողջ էդ համակարգը:

54:01 – Բայց էդ մարդիկ էլ են էդ համակարգի մասը:

- Մենք իրար հակասու՞մ ենք:

54:10 **Հրանուշ**. - Շատ օրինաչափ հարց է, պարոն Հովհաննիսյան:

- Գլխավոր հարցն է:

Մարինե. - Ինքնադատ պետք ա լինել...

54:21 **Ջալոյան**. - Կներեք, դուք ձեզ համարում ե՞ք Սերժ Սարգսյանի համակարգի մաս:

Հրանուշ. - Հա, համարում եմ: Ես շատ հաճախ եմ ասում՝ ամեն մեկս... Առաջին մեղավորը ես եմ:

- Դե ուրեմն մեղավորի խնդիրն այնուամենայնիվ կա:

54:38 **Դավիթ**. - Դա համակարգի խնդիրն է:

54:39 **Հրանուշ**. - Համակարգի մեջ ինքս իմ տեղը որոշում եմ, բայց մեկ է, դա համակարգի մեջ է:

54:43 **Լուսինե**. - Արդյոք էստեղ մեղավորի դատի հարց կա, չգիտեմ...

Դավիթ. - Դատի բան չկա էլի, ես էլ էդ եմ ասում:

Ջալոյան. - Դատը իրա հետ կապ չունի:

Դավիթ. - Մարինե ջան, ես էլ էդ եմ ասում՝ դատ չկա: Ընդհանուր վերաբերմունքը կա հեղինակի, իսկ նույն Շալամովն ու Սոլժենիցինը լրիվ դատապարտում են, չէ: Լրիվ դատ է՝ Շալամովի մոտ՝ ավելի նուրբ, Սոլժենիցինի մոտ՝ շատ ավելի կոպիտ:

55:07 **Ջալոյան**. - Կոպիտ չի, իդեոլոգիական է:

55:10 **Դավիթ**. - Կոպիտ, կոպիտ, շատ ավելի կոպիտ:

55:11 **Լուսինե**. - Այսինքն սա իդեոլոգիական տեքստ չի:

55:13 **Դավիթ**. - Բացարձակապես:

Ջալոյան. - Շատ լավ է: Շատ քչերին է դա հաջողվում Հայաստանում:

Դավիթ. - Եվ ամենակարևորը այն է, որ սա... սա էն ժամանակվա մարզինալների մասին է գրվել, էն ժամանակվա մարզինալի կողմից: Էս շատ կարևոր բան է:

55:27 **Մարինե**. - Սահակ Տեր-Գաբրիելյանը մարզինալ է՞ր:

55:30 – Բա ի՞նչ էր:

Վարդան. - Էլիտա:

- Բա ո՞վ էր կենտրոնը:

55:32 – Բա տարան խփին:

- Ո՞նց թե... Բոլորին ի վերջո խփին: Ժողովուրդ ջան, Բերիային էլ են խփել:

- Մարինե ջան, բավականին շատ են խփել, բայց բոլորին չեն խփել: Խփել են ու՞մ. խփել են հարուստներին, խփել են կրթվածներին, հա՞՞:

55:51 – Չեղավ, չեղավ:

- «Չեղավ, չեղավ» ո՞րն ա:

55:53 **Միքայել**. - Մարինե, դանոս գրողներն էի՞ն ավելի շատ, թե՞ նրանք, ում վրա որ դանոս էին գրում:

55:57 – Ժողովուրդ ջան, էդ մարդիկ՝ սկզբից իրանք են սկսել, հետո տեռորը եկել ա իրանց դեմ:

Դավիթ. - Ո՞վ ա սկսել:

- Բոլշևիկները:

Դավիթ. - Բոլշևիկ ասելով ու՞մ նկատի ունես:

- Բոլորը: Ովքե՞ր են դեմ եղել բոլշևիկներից: Մի հատ օրինակ ասեք, որը դեմ է եղել, արտահայտվել է տեռորի դեմ: Մի հատ բոլշևիկի անուն ասեք:

56:16 – Ճիշտ է:

- Շատ ճիշտ է ասում Մարինեն:

- Բազմաթիվ:

- Հանրայնորեն դեմ է եղել:

56:27 **Դավիթ**. - Հանրայնորեն բոլոր էն ձախ կազմակերպությունները, բոլոր էսեռները...

56:31 – Հայաստանի. հանրային մարդու անուն, ով որ հանրայնորեն...

56:35 **Միքայել**. - Ժողովուրդ, բայց էդ դեմերը քաղաքական դեկլարացիաներով հո չի՞: Նույն ճարտարապետության միջոցով էլ է եղել, երաժշտության միջոցով էլ է եղել, դրա համար էլ գնդակահարել են: Գրականության միջոցով էլ է եղել:

Դավիթ. - Լուսինե ջան, Հայաստանում քսանական-երեսունական թվականներին...

Քսանական-երեսունական թվականներին բոլոր գնացածները դեմ են եղել: Բայց դուք ինձ ներ էք քաշում էն դիսկուրսի մեջ, որից ես ուզում եմ խուսափել: Մա... Ես պատմության մասին չեմ եկել այստեղ խոսելու, էն էլ ոչ պրոֆեսիոնալների հետ:

57:13 – Իմ կարծիքով՝ ես մի քիչ կարճ եմ խոսում, երևի չի հասկացվում իմ ասածը: Խոսքը ինչ-որ մեկին մեղադրելու, դատելու մասին չի, խոսքը նրա մասին է, որ հասկանանք՝ էդ ո՞նց եղավ, ինչի՞ց սկսվեց: (57:24 – Չէ, բայց դրա մասին չի խոսքը): Որ էն չէր, որ ինչ-որ մեկը սրիկա էր, ինչ-որ մեկը վախկոտ էր: Ասում եք՝ Միկոյանը...

57:24 – Չէ, բայց դրա մասին չի խոսքը:

- Բայց ինձ համար դա է խնդիրը, ժողովուրդ ջան: Ժամանակի մասին եթե խոսում ես, ինձ համար էդ է խնդիրը:

- Ժամանակի մասին... Ու դուք էդպես եք ընդունում:

57:36 – Բա էդ հարց չի՞, էդ կարևոր հարց չի՞:

- Դա ձեր ընկալումն է, շատ լավ:

57:43 **Միքայել**. – Մի բան հարցնեմ էլի հենց էդ ընկալումների տեսանկյունից: Իմ կարծիքով էս ստեղծագործության հիմնական արժեքներից մեկը էն է, որ ընթերցողը, կախված նրանից, թե ինքը ով է, շատ լայն հնարավորություններ ունի ընկալելու տեքստը այնպես, ոնց որ ինքը ուզում է: Ջալոյանն այս է ընկալում, Մարինեն հոլոկոստ է ընկալում, չգիտեմ...

58:10 **Ջալոյան**. - Չէ, չէ, խոսքը գնում է տոտալիտարիզմի ու իշխանության մասին:

Միքայել. - Ես ի նկատի ունեմ՝ ամեն մեկը դրա մեջից գտնում է էն, ինչը իրա հետաքրքրության դաշտում է: Էդ տեքստի, իմ կարծիքով, կարևորության (Ջալոյան. – Պոլիֆոնիզմ):... ու դրա հիմքում, իմ կարծիքով, ընկած է այ էդ իրա ոչ իդեոլոգիական լինելը, իրա ռեֆլեքսիվ ու օբյեկտիվ լինելը, հանգիստ լինելը: Էդ жесткость-ի բացակայությունը: (- Ու շատ քնարական:) Էդ քեզ հնարավորություն է տալիս դու ընտրես էն... էն հետաքրքրության գոն, որ քոնն է: Ու էդ հետաքրքրության գոները բավականին շատ են: Ես, որպես ավելի բան՝ երևի որ բժախնդիր ընթերցող՝ իմ համար լրիվ ուրիշ դաշտ է հետազոծում, որովհետև էստեղ շատ բան կա, որ ես չգիտեմ: Ու ես հետաքրքրությամբ բանի՝ познание-ի հետաքրքրությամբ էի էդ ամեն ինչը կարդում: Որովհետև ինձ էդ ժամանակը էդ ռակուրսից դիտարկելը, հա՞, էդ ժամանակը հայկական գեղարվեստական գրականության միջոցով ճանաչելը շատ հետաքրքիր անձնական էքսպերիմենտ է: Ամեն մեկը, իմ կարծիքով, կախված իրա կոնկրետ հետաքրքրության շրջանակներից գտնում է էս տեքստում էն, ինչ որ իրան պետք է: Ու ձեր վեճերը էդ տեսանկյունից, իմ կարծիքով, լրիվ անիմաստ են դառնում:

59:31 **Լուսինե**. - Էդ առումով երևի... Ինձ դուր եկավ, որ էս տեքստը՝ ֆիլմը, իրոք ընթերցողին տալիս է ազատություն և՛ էդ բացերը լրացնելու, և՛ էն մասը, որտեղ կա տեքստ՝ իր ուզած ձևով պատկերացնելու: Նույնը արդեն բազմիցս լավեց, ու դրա

համար էլ մենք էսպես, ոնց որ, չենք կարողանում գալ ընդհանուր հայտարարի՝ ամեն մեկս մեր պատկերացումն ունենք:

59:58 Ձալոյան. - Տեռորիզմի մասին որ խոսում եք, ո՞վ է հիշում, որ Նժդեհը... Նժդեհը քսան, բանն էր, քսան թվականին Գորիսում երեք հարյուր բոլշևիկ պատանդ է գնդակահարել և վեց հարյուր՝ Տաթևում:

1:00:14 – Եվ Նժդեհը բոլորին ստիպել է միանալ իրար...

1:00:18 **Մարինե.** - Դա ի՞նչ է՝ պատասխա՞ն է հարցին: Էդ ե՞ս ուզում ասես, էդ է՞ պատասխանը:

1:00:23 – Չէ, չէ:

1:00:28 – Ես ուզում եմ հարց տալ, ասել, որ տեռորը... տեռորը իդեոլոգիան չի, և տեռորի դիմում են և՛ լիբերալները, և՛ նացիոնալիստները, և՛ ձախերը: Եվ երկրորդը, որ ես ուզում եմ ասել ու նորից ուզում եմ հիշեցնել.

Չարենցը համարում էր, որ հայ ժողովրդի, հայ մարդու հիշողությունը հիվանդ է՝ նու, ստեղծագործությունները. և ինքն էլ, որ խնդրեց, որպեսզի Բակունցը գրի Կյորեսի մասին, բանը գրի՝ Թորոլենցը գրի իրա գիրքը, և այլն, և այլն, այսինքն այդ քաղաքների մասին, որոնց հիշողությունը անհետացել է, կորել է, ջնջվել է:

1:01:10 **Լուսինե.** - Լավ:

Իգարելյա Սարգսյան. - Ես բացի դրանից ուզում էի ասել՝ եկեք այնուամենայնիվ գրքին ինչ-որ չափով վերադառնանք:

1:01:15 **Լուսինե.** - Ես նույն բանն էի ուզում ասել:

Իգարելյա. - Եկեք վերադառնանք, որովհետև ամեն ինչի մասին կարելի է խոսել: Նախ ուզում եմ ասեմ, որ այնուամենայնիվ սա գեղարվեստական գործ է, ոչ թե վավերագրական, ոչ թե պատմական, ոչ թե արխիվային, ոչ թե ճշմարտությունը վերականգնող՝ գեղարվեստական գործ է: Ինձ թվում է՝ պետք է դրան վերաբերվենք որպես գեղարվեստական գործ: Եթե ուզեր հեղինակը՝ կարար ծերից ծեր շուռ տար, ինչ ասես կարար գրեր, հենց դրանով գեղարվեստական գործը տարբերվում է փաստագրական...

1:01:43 **Դավիթ.** - Հա, ահագին բաներ շուռ է տվել:

Բելա. - Հա... Հա: Ու լավ է արել՝ շուռ է տվել... հա:

1:01:48 **Միքայել.** - Իրա թուղթն է, իրա գրիչն է:

Դավիթ. - Կուզի շուռ կտա, կուզի շուռ չի տա: Չես ուզում՝ մի կարդա:

1:01:52 **Բելա.** - Որտեղ ուզում է՝ կարա շուռ տա. էդ առաջինը, որ ուզում էի ասելի: Երկրորդը. ինձ համար, գոնե որպես ընթերցողի, ինչն էր հետաքրքիր. որ շատերը ասում էին. «Լավ կլիներ՝ էդ ֆիլմը նկարվեր կամ բեմադրվեր»: Ես, օրինակ, շատ լավ սա ինքս իմ ուղեղի մեջ բեմադրեցի, տեսա, նկարեցի, ամեն ինչ արեցի: Էդ ժանր է յուրահատուկ, որ միգուցե հեշ պարտադիր չի, որ բեմադրվի:

1:02:19 **Միքայել.** - Չէ, Բայց լինում է չէ՞, որ կարդում ես ու ասում ես. «Այ, ինչ լավ ֆիլմ կլիներ էս»:

1:02:22 **Բելա.** - Հա, լինում է էդպես: Բայց հետո էդ ֆիլմը նայում ես ու պարզվում է, որ քո պատկերացրածը ու էն, ինչ որ ուրիշ մարդ է պատկերացրել՝ լրիվ տարբեր են: Իմիջայլոց...

1:02:30 – Կամ նայում ես ու ասում ես...

- Հա, կարող է: Բայց հենց դրա համար շատ սցենարիստներ էդ ֆիլմերի նկարահանման ժամանակ գնում, ռեժիսորի կողքը կանգնում են: Հենց էդ պատճառով, որովհետև իրանց պատկերացրածն ու ուրիշ մարդու... Միգուցե ժանր որպես էդպես է հետաքրքիր:

Ու երրորդը. ուղղակի էսպիսի անձնական փորձից. ինձ թվում է, որ իմ սերնդի, էլ չեմ ասում, որ ինձանից փոքրերի համար, էս թեման ընդհանրապես գրեթե գոյություն չունեցող թեմա է: Պատճառները տարբեր են. առաջին իսկ պատճառը, ինչպես դուք արդեն ասացիք, էն է, որ երբ որ դու ասում ես «ցեղասպանություն» և այլն՝ մեղավորը մեկ ուրիշն է. դու զոհ ես եղել ու զոհ ես: Չնայած էդ էլ կարելի է քննարկել՝ ինչ չափով զոհ, ինչ չափով՝ ինչ ոնց: Բայց էս տվյալ պարագայում, եթե դու սկսում ես հետաքրքրվել, իսկ էս սցենարը դրդում է, որ դու հետաքրքրվես ու զուգահեռ ուրիշ բան կարդաս: Ես սրան զուգահեռ երևի հարյուր բան կարդացի էս ընթացքում: Ոչ մեկը չգիտի, ասենք էս չգիտեմ. իմ ընտանիքում չկան բռնադատվածներ ինչքան գիտեմ: Իսկ որ բռնադատված... Ինչպե՞ս:

– Պիտի չասելիք էդ:

- Բայց ինչի՞ պիտի չասելի: Ես մտածում եմ, եթե բռնադատված չեն եղել՝ իրանք էդ տարիներին ի՞նչ են եղել:

1:03:55 **Գևորգ.** - Սայլի մեջ չեն տեղավորվել...

– Հա, դե էդ սայլի պատմությունը ուրիշ է: Իմ նախնիները քաղաքաբնակներ են եղել ու տարբեր քաղաքներում, ոչ Հայաստանում հիմնականում, նաև Հայաստանում: Բայց մտածում ես. լավ, ենթադրենք չեն եղել. բա ի՞նչ են եղել:

1:04:14 – Ինչի՞ չեն եղել:

- Ինչի՞ չեն... Չէ՛. ինչի չեն եղել, բայց ի՞նչ են եղել, ո՞վ են եղել:

1:04:18 **Անահիտ.** - Իսկ դա անդրադառնում է ձեր զգացողության վրա:

1:04:21 – Իհարկե անդրադառնում է: Ուղղակի...

Անահիտ. - Հետաքրքիր է: Ինչո՞ւ եմ ասում. որովհետև, ասենք, Պարսկաստանի ինչ-որ խորքերում ապրող ընտանիքի զավակ որպես, որ ընդհանրապես նույնիսկ տեղյակ չենք եղել էս բոլորից, բացարձակապես կապ չի եղել, ինչո՞ւ իմ վրա այդքան ծանր է այս ամբողջը նստում, երբ որ ես սովորել եմ շատ-շատ բարձր տարիքում:

1:04:40 **Իզաբելլա.** – Երևի դուք ինչ-որ... Էդ մենք մի անգամ Գևորգի հետ խոսում էինք, այդ թվում այս գրքի հետ կապված. ամեն մարդ իրա ճանապարհը ունի իրա մեջ, հա՞ : Ես էս... Ինձ համար սա նոր թեմա չի, ես էս թեմայով նոր չի, որ հետաքրքրվում եմ: Տարբեր փուլեր կյանքի ես անցել եմ, դրա համար էդ մտածելը ինձ համար նոր չի ու Էդքան ցավոտ չի, որովհետև էն ցավոտ փուլերով տարբեր տեղերում ես անցել եմ: Բայց էդտեղ հազար ու մի ուրիշ հարցեր է ծագում: Օրինակ մենք տանը ունենք հազար ութ հարյուր թվականի ինչ-որ անտիկվար... անտիկվարիատ, հա՞, ինչ-որ բան: Ասում եմ տեսնես էս որտեղից: Օրինակ ասում է՝ բանը... «Трофейный բաժակ է սա»: Ուզում եմ ասեմ՝ էնքան թեմա է բացվում, եթե մարդը հետաքրքրված է ու իրոք պատրաստ է անկեղծ լինելու իրա հետ: Ինձ թվում է՝ էս թեման փակվել է շատ հաճախ. ոչ թե թվում է՝ էս կարծում եմ էդպես էլ կա, որովհետև եթե սկսես բացել, կստացվի, որ նույն հայ ժողովուրդը, որ ինքն իրան միշտ էդ սպիտակ, փափուկ, զոհ, տանջված, ամբողջ աշխարհի կողմից հալածվածն է (համարում), պարզվում է՝ մեր մեջ, ու շատ հավանական է՝ մեր պապերը, մեր... չգիտեմ ով, շատ մեր կողմից սիրված մարդիկ, կամ մեր ընտանեկան լեգենդներում շատ լավ մարդիկ... Կպարզվի, որ էդ Ավետիսն ու չգիտեմ՝ Սարգիսն են, կամ... Ու միշտ արդարացում կա. որ դա արել են, որովհետև եթե իրանք չանեին իրանց կանեին, որովհետև էս կամ էն կամ էն կամ էն: Դրա համար էս գործը ինձ համար ինչով է կարևոր. նախ, իհարկե, ընտանիքների ու տարբեր պատմությունների, որ ամեն մեկս կարանք հավաքենք, եթե ուզենք: Երկրորդը՝ էն, որ սրան զուգահեռ մենք նայում ենք նաև Լիտվայի էդ կնոջ պատմությունը՝ որ հրեաների ոչնչացումներն է մերկացրել...

1:06:27 **Լուսինե.** – Զգացի, որ էդ կողմ ես գնում...

1:06:28 – Չէ, էդ... Էդ նորություն չի իմ համար ու երեկ չեմ էդ կարդացել, դրանից առաջ տարբեր բաներ գիտեինք: Էդ չի էականը: Էականը էն է, որ, օրինակ, նույն արխիվները, որոնք որ, տեղեր կան, ԿԳԲ-ի արխիվները բաց են, Հայաստանում կամ տարբեր են... Էդ ուրիշ թեմա է, բայց հիմա ես չեմ կարող գնամ, բացեմ, տեսնեմ:

1:06:58 **Մարինե**. - Չեմ կարող չառարկել, որովհետև Եղեռնի հետ համեմատությունը, ընդհանրապես Եղեռնի հիշողությունը ամենա- քան՝ մարդու, ամենատհաճ, ի՞նչ ասեմ՝ ամենացավազին հիշողությունն է: Եվ եթե մարդու ընտրությամբ լիներ՝ մարդը Եղեռնը կմոռանար: Էդ համեմատությունը հեջ...

1:07:15 – Ես... Մարինե, դու ինչպես միշտ... Կներես էլի, ես մի քան եմ ասում, դու ուրիշ քան ես ասում:

1:07:16 – Դու ասում ես... Դու ասում ես, որովհետև զոհ էինք մենք էնտեղ: Ի՞նչ ես ուրիշ քան ասում: Ասում ես «եթե մենք եղել ենք զոհ, դրա համար մենք հիշում ենք դա»: Իսկ էնտեղ, որտեղ կարող է դահիճն ենք եղել՝ չենք հիշում: Դա չես ասո՞ւմ:

1:07:29 – Ես էդպես չեմ ասում, ես ասում եմ, որ դա հիշելը ավելի հեշտ է...

- Ես էլ ասում եմ՝ չե՛...

1:07:36 – Դե լավ, ես հիմա դրա մասին չեմ խոսում, լրիվ ուրիշ քան եմ ասում, ու ընդհանրապես էդ շատ տգեղ սովորություն է՝ մարդու խոսքերը կոնտեքստից պոկել, ուրիշ քանի տեղ դնել: Ես ասում եմ, որ իմ կարծիքով սա դուրս է ընկել մեր հիշողությունից, այդ թվում նաև...

1:07:51 **Մարինե**. – Ժողովուրդ ջան, ես երևի գնամ: Ներողություն եմ խնդրում, ոնց որ հասկացա՝ վեճ չեք ուզում, դուք ուզում եք կենացներ:

1:07:58 – Չե՛... Բարի ճանապարհ, ինչ ասեմ: Համենայն դեպս ես ուզում էի, որ մենք գործը քննարկենք, ոչ թե ամեն մարդ իրա խնդիրներն առաջ բերի: Մերսի:

1:08:12 **Լուսինե**. - Համաձայն եմ: Բելլան ճիշտ քանի բերեց՝ կետի բերեց նորից: Ո՞վ է ուզում գործի մասին արտահայտվի:

– Էս ինչի ես աղջկան նեղացրիք: Էդ ի՞նչ եղավ:

– Հենց որ թողիր գնացիր...

- Որտե տենց չի կարելի:

1:10:52 – **Լուսինե**. Էլի արտահայտվել ցանկացողներ կա՞ն:

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

1:08:47 **Սոնա Այվազյան**. - Ինձ շատ դուր եկավ: Ես շատ հետաքրքրությամբ էի կարդում ու ինձ շատ հետաքրքիր էր, թե Գևորգը ոնց գրած կլինի էդ ամեն ինչի մասին: Ու շատ հետաքրքիր էր, որ ուղիղ տեքստ չկար... Տենց շատ նուրբ ուղղությամբ գնում էր... Ու ինձ թվում է ընկալվում էր: Շատ հետաքրքիր էր էդ

տարիների մթնոլորտը, չգիտեմ, ենթադրում եմ, որ բավականին ճշմարտացի է ներկայացվել, որովհետև ես ինքս էդպես եմ միշտ պատկերացրել, ու ինձ համար վերահաստատումն էր էն պատկերացումների, որ ես եմ ունեցել: Չգիտեմ, որքանով է ճշմարտացի էդ մարդիկ, հարաբերությունները: Կուզենայի որ իսկապես ճշմարտացի լինեի ու էդ առումով չգիտեմ որքանով է պատմական արժեք ներկայացնում, բայց ես գոնե տենց տեսա: Մի խոսքով շատ հետաքրքիր էր, հուսով եմ որ հնարավորություն կլինի դա ֆիլմ դարձնելու, շնորհավորում եմ:

Գևորգ. - Բայց կենաց պետք չի ասել:

1:10:00 – Չէ, ես կենաց չեմ ասում: Ճիշտն ասած ինձ ավելի շատ հետաքրքիր էր, եթե ասենք դուք գրած չլինեիք, ուրիշ մեկը գրած լինեի, մի քիչ ուրիշ ձև կարող է ընկալվել, ու էդ էր իմ մեջ ավելի շատ հետաքրքրություն ստեղծում նաև: Ու էդ գրվածքը դուր եկավ ինձ: Իմ մոտ ուղղակի լիքը բացեր մնացին, երբ որ տիկին Խառատյանը ասում էր. ինքը ուրիշ տեսանկյունից է ասում, ուրիշ բազայի հիման վրա է ասում, բայց ինձ էլ էր լիքը-լիքը ինֆորմացիա պակասում, որովհետև էսպես դրվագներով էր, միգուցե էդ էլ էր պատճառը: Բայց դու գիտես, որ կա էդ ինֆորմացիան, որը չի ասվել, ու էդ կիսատությունն էր մի քիչ խանգարում, որ ինքը ավելի լավը լինեի: Չգիտեմ, էդ որքանով հնարավոր կլինի լրացնել, բայց եթե մի քիչ ավելի շատ լինեի էդ ինֆորմացիան, նույնիսկ հակասական և բացասական, ինձ թվում է՝ ավելի լավ կլինեի:

1:10:57 **Դավիթ.** - Էն մեծ նկարիչները ո՞նց էին անում. հիմնականը նկարում էին, հետո ֆոնը ասում էին աշկերտներին թող նկարեն: (- Մենք հիմա աշկերտ ե՞նք (ծիծաղ)) Իմ կարծիքով, էդ չբացվածությունը հիմնական արժեքներից մեկն է: (-Այո) Եվ կարծում եմ, որ էդպես պատկերացնել էդ ժամանակաշրջանը... դա բացարձակ հակասական է այդ ժամանակաշրջանը... ինչը կարծում եմ հեղինակն էլ է գիտակցել և մեծամասամբ գիտակցաբար արտահայտել: Եվ դա հենց էդ ռեֆլեքսիայի արդյունքն է. ինչ-որ բաներ, ինչ-որ էսօր չկան, ինքը էդ տեքստով փորձում է ասել: Ու ինձ համար էդ ամեն ինչը շատ արժեքավոր է: Եթե ֆիլմ դառնա՝ ավելի լավ: Չգիտեմ: Ռեժիսորը ուրիշ բան է, իսկ ես՝ դու պիտի նկարես էդ ֆիլմը: Քո ֆիլմն ա, հա:

1:12:23 **Հրանուշ.** - Մի հատ հարց ունեմ ես. հարց, ձևակերպում, նույնիսկ կարելի է առաջարկ անվանել իրան: Ինձ ամենից շատ հետաքրքրող երևույթներից մեկը, որ շատ հպանցիկ եմ միշտ գրում, որովհետև ինքս էլ լրջորեն խնդիրը հասկանալու պրոբլեմ ունեմ, էն է, որ հատկապես երեսնական թվականներին բոլոր էդ... Գիտե՞ք ասենք օրինակ՝ կարևոր «Правда» թերթը ամեն օր լույս էր տեսնում, ճակատին գրած էր «решение суда, решение народа»: Եվ էդ «решение суда, решение народа» պրակտիկ շատ բան ուներ՝ կիրառություն ուներ: Ամեն մի կամպանիա կամ ամեն մի ընտրական ժողովրդի թշնամու հետ կատարվող բանը գալիս էր, դառնում էր կոլխոզի... Չեմ ասում դեռ կոմկուսի... Կոմկուսն իրա բոլոր բջիջներով հղումներ էր անում, ճառերն

ասում էին, թշնամու ճակատին խարանը դրվում էր, պահանջում էին շուտ ոչնչացնել, փոշիացնել, ջնջել և այլն: Բայց երբ գնում-հասնում էին կոլխոզներ, ցեխեր, էնտեղ աշխատող մարդկանց, նույնիսկ կարող էին բակերը գնալ, այսինքն հավաքված մարդկանց, և էդ մարդիկ պետք է ելույթ ունենային ու ասեին, որ «Այո, դա ժողովրդի թշնամի է, շուտ արեք, ոչնչացրեք, մեզ ազատեք էդ իժերից» և այլն: **Ես սա համարում եմ շատ լուրջ մտածված ծրագիր հանրային մեղսակցության: Այսինքն՝ բոլորը հավասարապես պիտի մեղավոր լինեին: Հանցագործությունը դառնում էր համատարած:** Եթե հազարավոր մարդիկ ամեն մեկը իրա տանը, իրա... բարցրածայն և մամուլով մտավորականները առանձին պիտի թերթի ինտերվյուններում կամ իրենց հոդվածներում պաշտպանեին էդ որոշումները, պահանջեին: Էն «խեղճ» Ստալինը, «խեղճ» Մուղղուսին, «խեղճ» Խանջյանը ի՞նչ անեին: Նրանք պիտի էդ որոշումները կատարեին՝ կատարում էին: Հիմա էս համընդհանուր մեղսակցության խնդիրը ես չգիտեմ՝ ինչ չափով է գիտակցում հանրային ընդհանուր... Կար արդյո՞ք ընդհանրապես էդպիսի ընկալում: Բայց ելույթ ունեցողները, որը գիտեին, որ իրենք դարձան մասը, իրենց անունը գրվեց, և իրանք դարձան ոչ թե պարզ համակարգի մասը՝ իրենք դարձան դատավոր, իրենք դարձան դահիճ, իրենք դարձան պահանջատեր և պատասխանատու: Հիմա **պատասխանատվության էս ընդհանուր խնդիրը կարող է բացարձակ այլանդակել մարդկային հոգեբանությունը:** Ես միշտ էս մասին հիմա ավելի ծավալուն, ավելի մանրամասն, ավելի... նոթերում մենք պատրաստվում ենք էդ գրենք և գրում ենք: Բայց այ սրա գեղարվեստական լուծման ձևը...

1:15:10 **Դավիթ.** - Օրուելը գրել է:

- Ո՞վ

- Օրուելը:

1:15:13 – Օրուելը:

Հրանուշ. - Հա, Օրուելը: Ես հիմա չգիտեմ... Գիտե՞ք, հիմա էսպիսի մի բան կա. վերջերս խոսում ենք էն մասին, որ չնայած ընդհանուր խորհրդային հոգեբանական մեթոդների և հոգեբանական մթնոլորտի, էս տեռորի երևույթը և տեղական ընկալումներն ու առանձնահատկությունները կային: Սա... Հիմա օրինակ Բաբերովսկին Ադրբեջանի մասին է գրել: Գիտական է՝ գեղարվեստական չի, ստեղծագործություն չի, բայց մաքուր ստեղծագործություն է: Գիրքը կոչվում է էդ «Ստալինիզմի շրջանի տեռորը Ադրբեջանում», բայց էդ գլխի երկու երրորդը տասնութ-քսան թվականների հայ-ադրբեջանական կամ հայ-թաթարական ջարդերն են: Ընդ որում, էս չգիտեմ՝ իրան վճարել են, թե դա իսկապես իրա... Ինքը հիմա գալիս է հոկտեմբերին Հայաստան, խոստացել է ելույթ ունենալ (– Դասախոսման) և էդ հարցերը իրեն կտանք: Բայց տվյալ դեպքում էս իսկապես չգիտեմ. իրան վճարե՞լ են, որ ինքը մենակ «Կասպիյ» թերթն է հղում անում էս հարաբերություններում: Երկու

հարյուր Հայաստանում ջարդված աղբբեջանական գյուղերը ամեն տեղ հանդիպում են. երկու հարյուր՝ մեկ Նախիջևանում է հայտնվում, մեկ Բայազետում է հայտնվում, մեկ Երևանի գավառում է... Որ հաշվում եմ... (նստել, հաշվել եմ)... Որ հաշվում եմ, այսինքն մի, ասեմ էսպես, հազար տոկոսով մահմեդականների թիվը ավելացած է Հայաստանում՝ ջարդվածների: Հայաստանում (իր) էնքան մահմեդական են կոտորել, որ իրանց բոլոր ֆիքսված քանակական թվերին հազար անգամ գերազանցում է: Սա... Բայց ուզում եմ ասել՝ ինքը նախապատրաստում է Աղբբեջանի քաղաքական ռեպրեսիաների հոգեբանությունը սրա բազայի վրա: Ինքը հետո Նարիմանովին նկարագրում է, որ ինքը ստիպված էր շատ բան անել, որովհետև հայ ազգայնականները Բաքվում՝ Աղբբեջանում էս էին անում, էն... Հիմա ես չեմ ուզում, նույնիսկ բաց միջավայրում, առավել ևս էս միջավայրում, ասել, որ չկար հայ ազգայնական. էն էլ ինչքան կար: Չեմ ուզում ասել, որ սրանք դեր չէին խաղում: Իհարկե դեր խաղում էին, բայց այնուամենայնիվ կա պատվիրված վերլուծությունը և կա անկեղծ վերլուծությունը: Վերջացնում եմ: Էլի անկեղծ վերլուծության հաշվով ես ինձ բռնացնում եմ բաների վրա, որ չեմ ուզում՝ ամաչելով եմ ես ասում, բայց չեմ ուզում՝ առայժմ, ինձ թվում է, որ առայժմ չեմ ուզում:

Ինքը շատ սիրուն լուծումներ է գտնում: Իմ ասածը, դրա համար ասեցի՝ ձևակերպում եմ չգիտեմ՝ հետո առաջարկը, հետո խնդրանքը, հետո ձևակերպումը: Բայց էս համընդհանուր մեղսակցության ձևավորման երևույթը և դրա հետագա ազդեցությունը մարդկանց վարքի կաշկանդման վրա շատ ուզում եմ, որ ձեր լուծումներով գնա, ոչ թե մեր...

1:18:12 **Նունե.** - Էս դեպքում... Շատ կարճ: (- Հա, հա): Այնուամենայնիվ, ես, պիտի վերադառնանք տեքստին, ես անպայման պիտի մի հատ էլ կարդամ, որովհետև իմ կարծիքով ահագին բան բաց եմ թողել տեքստային, գեղարվեստական արժեքի առումով, բայց մի երկու բան ուզում եմ բերել: Շատ կարճ. այ ասում եք՝ բաց տեղեր կան, ուզում եմ լրացնել: Շատ կարճ նախադասություններով բավականին մեծ շերտ է բացվում: Ասենք՝ ռադիո են լսում ու մայրը ասում է. «Տեսնես խեղճ մարդը գիտի»: Էնքան բան է բացում՝ հսկայական կոնտեքստ: Կամ էն, որ ասում է. «Ժողովրդի թշնամու հայացքով...», թե ինչ-որ մի հատ էսպիսի կտոր կա, որ էդ քո ասածը, որ ժողովուրդը այ էդ իրա մեղսա... Այնտեղ էնքան տարբեր խմբեր կային: Կամ համարում էին, որ էն ամենավերինը օտարված է այս բոլոր մեղքերից ու էդ ներքիններն են անում. ես դրա համար եմ ասում: Անընդհատ գալիս ես, բերում ես տարբեր ժամանակներ: Էսօր հազար անգամ կարող ես էդ նույն բանը լսել: Ինքը ժամանակային ֆիքսված չի էլի: Բայց ինձ թվում է, որ էս տեքստը... Չգիտեմ, կարող է դաժե ես մի հատ բան գտնեմ, փորձ անեմ հենց տեքստային առումով վերլուծել, որովհետև շատ հետաքրքիր բաներ կային՝ նախողկաներ կային էլի՝ հենց տեքստային, ինձ մի հարցրու: Միայն է՞մ բռնել:

1:19:34 **Լուսինե.** - Չէ, չէ: Շարունակեք: Մի րոպե:

Սոնա. – Ես, հա, մի բան ասեմ: Բայց ուզում եմ հասկանամ՝ ինքը ընդարձակվելու ենթակա՞ է, թե ինքը ամբողջական է համարվում:

Լուսինե. - Լավ հարց էր:

1:19:54 **Գևորգ.** - Էս պատմությունը ավարտվեց, բայց էնտեղ գրած է «Հայաստան, քսաներորդ դար» շարք: Արիկն է մեղավոր, որովհետև ես որ գրեցի էս պրծա, ինքը առաջին ընթերցողն էր: Ասաց. «Այ, ես սենց ուզում եմ, որ պատմության ամեն հատվածը պատմվի»: Պարտադիր չի իմ կողմից, էլի, ուղղակի ինչ-որ մեկը կարողանա իմաստավոր կերպով մի շարք դա անել, ու ինքը իրա ելույթում ասեց էդ փուլերը ոնց է ինքը տեսնում: Դրա համար ես գրեցի «շարք», բայց էս պատմությունը, ինձ թվում է, ավարտվել է:

1:20:31 **Սոնա.** - Չէ, ոչ թե վերջի մասին եմ խոսում, բայց միջի մասին եմ խոսում: Այսինքն՝ էլի լցվելու ենթակա՞ է դրվագներով, թե՞ չէ:

1:20:40 – Սոնա ջան, եթե... Ի՞նչ ասեմ: Ասենք, եթե իրոք ռեժիսոր պատահեր, ասեր. «Արի նստենք մենք տարբերակը...», ինչ-որ պրոդյուսերի հետ, բան. ռեժիսորի հետ նստեինք՝ լիքը փոփոխություն կարայինք անեինք: Բայց էս համարվում է որպես էսպես գրավոր ֆիլմ, էս առայժմ չեմ տեսնում ուրիշ բան: Բայց իմ մտքով ի՞նչ էր անցնում էս խոսակցության ժամանակ, որ կա հիմա էդպիսի ժանր, ու գուցե դա իմաստավոր է. ինտերնետում հնարավորություն տալ կոմենտար անել հավելյալ պատմությունների. դնել ինչ-որ վեբ կայքի, որտեղ ուրիշները կարող են ավելացնել, օրինակ, պատմական անձերի վերաբերյալ, ինտերակտիվ ինչ-որ էսպես անձն տեքստ սկսի դառնալ, ու ով ինչ ուզենա՝ գրի: Չէ, ոչ թե կարծիք, այլ ինչ-որ հավելյալ պատմությունները և այլն: Դա հնարավոր է: Չհաշված... Կներե՛ս, չհաշված են, որ պատմությունները մի կողմից ունեն պատմականություն, մյուս կողմից՝ հորինված են: Այսինքն՝ չկա ոչ մի պատմություն, որը ծայրից ծայր իրական է, բայց ինքը կարող է լինի կազմված մի քանի իրական պատմություններից, հա՞: Այսինքն, էստեղ իրոք պետք չի փաստագրություն, վավերագրություն փնտրել: Եվ առաջին դեպքը տեղի ունեցավ. ուրեմն՝ քանի որ ես դրել էի հայրիկիս և նրա ընկերների լուսանկարը, և էս ուղարկեցի (ափսոս, ինքը էստեղ չի հիմա, ասել էր, որ կգա) Նաիրա Մարտիկյանին, որին շատերը երևի ճանաչում էք: Ինչու՞. որովհետև ես գիտեմ, որ Նաիրան էս թեմաներով հետաքրքրվում է, լրիվ ուրիշ պատմություններից մի երկու անգամ հետը շփվել էինք էդ առումով: Մեկ էլ Նաիրան գրում է, որ. «Ամբողջը կարդացի՝ առանց էդ էլ հուզիչ էր, բայց որ վերջում տեսա, թե լուսանկարի վրա ովքեր են գրված՝ լրիվ ինձ խփեց, որովհետև Հայկ Տեր-Ղազարյանը իմ քեռին է եղել»: Այսինքն՝ տեղնուտեղը իրա մեջ (- Նոր պատմություն ծնվեց) սկսեցին բացվել ինչ-որ հավելյալ պատմություններ: (- Չակոսներ:) Հա: Մի խոսքով, այնպես որ դա կարելի է այդպես պատկերացնել, էլի: Բայց եթե դու կոնկրետ ասես. «Գիտե՛ս ինչ

Գևորգ ջան, ուզում եմ էս դրվագը էսպես զարգացնել՝ էս կմտածեմ...

- Չէ, ուղղակի հետաքրքիր է...

1:23:04 **Լուսինե**. - Ես ուղղակի մի հատ... էլի, որովհետև ուզում եմ հիմնականում խոսենք իրա որպես գեղարվեստական գործի մասին: Ինձ ամենաշատը էս տեքստում՝ գործում, դուր եկավ էն, որ ինքը դիրքավորված չի, ու ինքը տեղ է տալիս ամեն մեկին պատմելու կամ լցնելու, ոնց որ ինքն է ուզում: Ու դրա համար էս չեմ ուզում մի քիչ...

1:23:25 **Հրանուշ**. - Ես լրիվ դիրքավորված եմ...

1:23:27 – Չէ, կոնկրետ քեզ չի ուղղված: Ընդհանրապես...

1:23:31 **Միքայել**. – Ամեն մեկը ոնց ուզում է, էնպես էլ դիրքավորվում է:

Լուսինե. – Իրա հավեսը... Եվ հիմա... (- Դիրքը հուզմունքն է) Իրա հավեսը էդ իրա դիրքավորվածության մեջ է, ու ասեմ... Ասեմ ինչի. որովհետև հենց այնպես ստացվեց, որ սա կարդալուց առաջ՝ մի ամիս առաջ էդ բանն էի կարդացել՝ «Reading «Lolita» in Tehran», ու ինքը իմ համար շատ դիրքավորված տեքստ էր, որովհետև, հա, էլի խոսում է, ասենք, տոտալիտար համակարգի մասին, բայց ինքը անընդհատ բանի պոզիցիայից է խոսում, որը քեզ շատ նյարդայնացնում է, որովհետև...

1:24:10 **Միսաք**. – Որ ասում էս «դիրքավորված չի», դիրք չի՞ էն, **որ մարդիկ իմանան, չնոռանան:**

1:24:15 – Հա, դա դիրք է, դա դիրք է: (- Դա դիրք չի՞: Բա ինչի՞ մասին է խոսքը): Չէ, դա դիրք է, համաձայն եմ: Բայց էս չդիրքավորված՝ նկատի ունեի՝ ինքը չի որակում, չի դատապարտում... Այսինքն՝ էդ առումով երևի իմ համար շատ ուժեղ բան է:

1:24:31 **Միսաք**. – Իրա խնդիրն էլ ուրիշ տեղ ա...

Դավիթ. – Պարզ գնահատականներ չի տալիս, էլի...

Միսաք. – Դա գուցե ոչ թե իդեոլոգիականն է, որ դուք եք ասում, որ «իդեոլոգիական» չի, այլ կակ ռազ մանյովրականությունն է իրա...

Դավիթ. – «Մանյովրայնություն» չէի ասի էս:

Լուսինե. – Հա, ինքը իդեոլոգիական չի: Հա, էս իդեոլոգիականը նկատի ունեի:

Միսաք. – Դա իդեոլոգիա է, որ «ամեն ինչ բոլորը իմանան» (- Հա), **անհուշ բան չլինի. դա իդեոլոգիա է:** Իսկ եթե չի ասում՝ ով է մեղավոր, ով՝ չի, դա իրա մանրայնությունն է: Վերջ:

1:24:54 – Լավ:

1:24:56 **Դավիթ**. – Մանրայնություն չէի ասի դա: Կա բան՝ **նշանակալից լռություն**, չէ՞:

1:25:06 **Միսաք**. – Էդ արդեն սիրուն բառ է:

Դավիթ. - Էդ սիրուն բառ չի, էդ մանկ չի, հա՞: Դու ինչ-որ բաներ գիտես, որ բոլորը գիտեն: Ասենք ես հասցեագրում եմ իմ տեքստը էն տեքստին, որը քո գիտակցության մեջ պահվում է, դրանք իրար հետ միանում են ու դառնում ա էն ընդհանուրը: Էդ պատճառով (**Միսաք.** – Տակտիկա է:), Սոնայի ասածի հետ եմ կապում, որ դուք միացնում եք ձեր գիտակցության մեջ, հա՞, տարբեր ասոցիացիաներ: Շատ ազդակներ կան տեքստի մեջ, դրանով է հարուստ, հա՞ էն տեքստային հատվածները, որոնք ձեր գիտակցության մեջ են: Դրանք միանում են ու դառնում են ձեր արդեն տեքստը, հա՞, տեքստ ընթերցողից: Մա շատ կարևոր է, որ էս տեքստը էդ հնարավորությունը տալիս է. դա դառնում է տերմին. և **էստեղ նստածներից բոլորը, ով որ կարդացել է, ունի իր տեքստը, որը Գևորգի գրած տեքստի հետ հանրակնում է միայն այնքանով, ինչքանով որ հասկացվել է էդ տեքստը ընթերցողի կողմից և... Իսկ մնացածը ընթերցողն է ավելացրել**, ու դա շատ լավ գրած տեքստի հատկանիշ է:

1:26:31 **Միսաք.** - Ես լրիվ համաձայն եմ: Ես ուզում եմ, որ էսօր երգենք սուլմաժոր լինի, հիմա չերգեք՝ ձեր գործն է:

Դավիթ. - Բայց սուլմաժոր երգելու համար ես տալիս եմ հիմնական մեղեդի: (Միսաք. - Դաժե մեղեդի եմ տալիս, էլի): Որ դու արդեն (Միսաք. – Էնքան որ մտնի էլի: Էնքան որ մտնի:)... Դու քո Jam Session-ը անես:

Միսաք. – Դա արվեստի հենց բանն է՝ առաքելությունն է. ինչ-որ մի բան էնպես մտցնել, որ մտնի:

Դավիթ. 1:27:03 – Լոտմանը մի հատ հրաշք հոդված ունի, որը կոչվում է (Միսաք. - Կարդացել եմ:), գիտեմ որ կարդացել ես, «Каноническое искусство как информационный парадокс»: Ինչը վերաբերում է մենակ տրադիցիոն և արխայիկ արվեստներին, էդ ժամանակաշրջանների տեքստին: Բայց հիմա ինչ-որ հետաքրքիր ձևով էդ պատմության անիվը պտտվում, գալիս է նորից էդ ձևի տեքստերի, որովհետև շատ պահանջարկ ունեն էսօր հենց ազդակներով հագեցած տեքստերը: Շատ, լրիվ, ամբողջ ինֆորմացիոն էս փոթորիկի մեջ ես, ու եթե ազդակները ճիշտ է դրած՝ շատ լավ միանում է ամեն ինչ, եթե սխալ է դրած՝ ոչ մի բան չի ստացվում, քանդվում-գնում է: Ու էս տեքստի առանձնահատկություններից մեկը հենց էդ է, որ շատ լավ, հետաքրքիր ազդակներ են, հզոր ազդակներ են:

1:28:18 **Մաշայի քույր.** - Իսկ կարելի՞ է մի հարց. էստեղ ուղղակի մի բառ հնչեց՝ խանդավառություն, որը շատ մտորումների տեղիք տվեց: Անկեղծ ասած՝ Մարինեին էի ուզում էդ հարցը տալ. ցավոք գնաց: Բայց ավելի շատ տիկին Խառատյանի հետ եմ համամիտ, որովհետև արդյո՞ք խանդավառություն կա որպես այդպիսին: Այսինքն՝ խանդավառությունը օդի մե՞ջ է, համատարա՞ծ է, թե առանձին անհատների խանդավառություն է:

1:28:39 **Արա.** - Առանձին անհատների խանդավառություն չի լինում:

1:28:42 – «Առանձին անհատ»՝ նկատի ունեն մեծություններ, ինչպիսին էր Չարենցը:

Արա. – Ինձ թվում է դա անհնարին է:

1:28:47 **Դավիթ.** - Էդ էլ Ֆրեյդի հոյակապ աշխատանքն է, «Человеческое Я и психология нации» (1921 Group Psychology and the Analysis of the Ego):

Խանդավառությունը միշտ հասցեական է:

1:28:55 – Ուղղակի գրքում էլ չի երևում խանդավառությունը որպես այդպիսին: Գրքում բնականաբար կյանքն է...

1:29:02 **Արա.** – Որպես... Բացատրեմ. որպես հակադիր. ինչն է ցավ գալիս, որ էդ մարդկանց ոչնչացնում են, որովհետև դրանք հիշատակ են, այս դեռ հինգ տարի առաջ եղած խանդավառության մարդիկ են, հա՞:

1:29:15 **Հրանուշ.** – Կա՞ այդպիսի խանդավառություն որ, ես չեմ տեսել:

Դավիթ. – Չէ, չէ...

1:29:22 **Գևորգ.** – Խոսքը իմ գործի մասին չի:

Արա. – Ժողկոմը, որը թույլ չի տալիս կտրել անտառներ...

1:29:32 **Գևորգ.** – Մի լավ օրինակ բերեմ փոքրիկ, ու շատ կան այդպիսի օրինակներ: Ես կարող եմ հասկանալ, որ մարդիկ, որոնք էդ շրջանում էստեղ իրանց սերունդները չեն ապրել կամ երիտասարդ սերունդ են՝ չեն կարող դա հասկանալ: Մեկը Լեոյի «Անցյալից» ինքը նկարագրում է Շուշվա տխուր վիճակը տասական թվականներին՝ դարասկզբին, ու ոնց էդ սոցիալ-դեմոկրատիայի մտները ամենամեծ մշակութային իրադարձությունն էր Շուշիում: Բոլոր իրա սերնդակիցները և նախորդ սերունդն էլ, որ, ասենք, Աշոտ Հովհաննիսյանը իրենից երևի մեծ էր, չեմ հիշում հիմա, ամեն դեպքում իրանք բոլորը ընդգրկվեցին էդ շարժման մեջ, որովհետև սոցիալ-դեմոկրատիան it was the main game in town: Դա դարձավ գլխավոր իրադարձությունը, որը հազար ու մի հարց էր լուծում, նացիոնալիստի համար՝ էդ միջոցով, հա՞, դաշնակցական տարբերակով: Ոչ նացիոնալիստի համար՝ համաշխարհային հեղափոխության միջոցով: Էդ մի օրինակ: Մյուսը՝ իմ անձնական օրինակը. պապիկս՝ մայրիկիս հայրը իրեն և իր քրոջը ռուսական դպրոց էր տվել. երեսունական... քառասունական թվականների մասին է խոսքը: Որովհետև համարում էր, որ էլ հարց չկա՝ վերջացավ, ոնց որ Օստապ Բենդերի մոտ սառնում է. «Еврейского вопроса больше нет», հա՞: Փակվել է. հարցը, որ պիտի ազգայինը պահպանվի, զարգանա և այլն՝ ինքն իրան լուծված է: Ոչ թե, որ վերացել է, այլ ինքն իրեն լուծված է: Մնում է, որ միջազգային լեզուն մարդիկ իմանան, որ կարողանան մեծ մաշտաբի գործեր անել: Էդ խանդավառությունը իհարկե շատ կար: Էսօր դժվար է դա հասկանալ, մի շարք իմաստներով: Բայց ինձ ինչն է զարմանալի. եթե մարդը չի կարող դա հասկանա,

մինչդեռ հասկանում է էսօրվա... Օրինակ, էսօր կա նացիոնալիստ կամ ԱՄՍԱԼԱ-ի նախկին անդամ կամ երդվյալ դաշնակցական, որին դու հավատում ես, որ ինքը հենց էդպես է կարծում, հա՞: Այսինքն էսօր կա՛ էդ խանդավառությունը, դրա կողքը կա դրա ֆա՛ռշ խանդավառություն: Բայց եթե նայես՝ միշտ ինչ-որ գաղափարախոսության շուրջ կա ինչ-որ խանդավառություն:

1:32:10 **Մաշայի քույր.** – Ես դրա համար հարցը տվեցի. արդյո՞ք համատարած էր և օղի մեջ էր, թե դա մտացածին ինչ-որ երևույթ էր, որը ներմուծվում էր փաստորեն, չէ՞:

- Էդ դժվար հարց է, բայց...

- Այսինքն մարդիկ իրենց խոհանոցներում նստած խանդավառությա՞մբ էին...

- Սոցիալ-դեմոկրատիան ու մարքսիզմը համաշխարհային երևույթ էին, աշխարհով մեկ էին խանդավառություն ստեղծում...

Հրանուշ. - Լեոն տարբեր է...

Գևորգ. - Պապիկս ուղարկել է դպրոց մայրիկիս ու մորաքրոջս քառասունականներին...

Հրանուշ. – Իսկ գուցե նոմենկլատուրային նկատառումնե՛ր է ունեցել, և ոչ թե խանդառավություն...

- Չէ:

- Ինչից՝ չէ:

1:32:46 – Դե մեր պատմությունը պարզ է, հա՞, սուբյեկտիվ է:

- Ընտանեկան պատմությունը:

- Հա, հա:

Հրանուշ. - Դա որքա՞ն է հանրային գիտակցությունը եղալիսին՝ ես չգիտեմ: Այսինքն, որևէ մեկը կարո՞ղ է ասել, որ ռուսական դպրոցի ընտրության, ընտրողների տաս տոկոսը, քսան տոկոսը, հարյուր տոկոսը գաղափարական հավատի, ոչ թե նոմենկլատուրային նկատառումներով էին գործում:

1:33:08 – Չէ, իհարկե դա հնարավոր չի, բայց...

- Ընտանեկան պատմությունը հանրային խանդավառության դրսևորում շուկա ներկայացրեց:

1:33:15 – Ես դրա համար երկու օրինակ բերեցի:

- Լեոյինը՝ ժամկետային շատ տարբեր է:

- Տարբեր ժամանակ...

- Լեոյինը՝ ես հավատում եմ, ձեր պապիկինը՝ նույնպես հավատում եմ: Լեոյինը հավատում եմ, որպես էն ժամանակվա հանրային, ձեր պապիկինը՝ հավատում եմ որպես մասնավոր դեպքեր:

1:33:30 **Դավիթ**. – Ժողովուրդ, հիսուններեք թվականի մարտի քանի՞սն էր, որ մեռավ Ստալինը:

- Տասներեքը:

- Չէ, երեքը:

- Ինչքա՞ն մարդ էր լացում: Ո՞նց էին մարդիկ փողոցներով, էսպես՝ ողբերգության մեջ, հա՞:

1:33:45 **Գևորգ**. - Չէ. նա, ով Ստալինի մահվանից լաց չէր լինում... Կար մարդ, որը հավատում էր, որ պիտի սոցիալիզմը լինի մաքուր, գեղեցիկ և լավ:

1:33:57 **Հրանուշ**. – Հիմա. իմ հայրը մահացավ ստալինիստ մնալով: Իմ հոր համար Ստալինը ոչ թե սոցիալիզմի, այլ սովորական, պարզ, լավ իշխանավորի՝ ձեռքը սեղանին խփեց՝ արդարությունը դրեց. էդ էր նրա հավատը... Էդ էր նրա հավատը: Լացողների իննսուն տոկոսը հավատում էր էն քարոզչությանը, որ արդարությունը բերում է էդ մարդը: Գրեց Ստալինին. հարյուրավոր, հազարավոր դիմումներից երկուսը գալիս էին Ստալինի ստորագրությամբ արդարացումով, դառնում էին ահռելի քարոզչության նյութ: Եթե մի երկրում, Դավիթ, ինֆորմացիայի մենատերը Ստալինն է, իսկ ինչպիսի՞ն պիտի լիներ մարդու գիտակցությունը:

1:34:38 **Դավիթ**. - Հասկանալի է: Հա, հա, բա իհարկե: Մենք իրար հետ չենք վիճում, ուղղակի սրա մասին խոսելը ավելորդ է:

- Չենք վիճում, ես ուղղակի կիսասառարկելով բացատրում եմ:

1:34:58 **Անահիտ**. – Նախ հանրայինը ուզում եմ հասկանալ ինչ է նշանակում: Հանրայինը այդ ժամանակվա, հիմա նույնիսկ, այսինքն, հիմա հանրայինը ասենք սերիալներն են. հանրայինը կարող ենք դա համարել: Բայց ինչ որ ասենք վերաբերում է խանդավառությանը, դա ոչ թե պիտի համարել հասարակական, հանրային, որովհետև հասարակությունն է հիմա հանրությունը, հիմնականում բավական քիչ տեղեկացված է այս բոլորից, որովհետև չկար հասարակական ինֆորմացիոն միջոցներ, որովհետև կրթված չէին համատարած, և այլն, և այլն, և այլն: Հիմա՝ հանրայինը, եթե մենք դա ընդունելով որպես բազա - base մեզ համար, հանրայինի այն շերտը, որ արդեն մենք դրանց ենք նայում որպես հանրային. մտավորականություն,

կարդացած, Ներսիսյան դպրոց ավարտած, չգիտեմ, Կեղրոնական ավարտած: Եթե մենք դրանց նկատի ունենք՝ այո՛, խանդավառություն կար: Ինչո՞ւ խանդավառություն կար: Եվ սա միանգամից չի եղել: Սա սկսել է հենց սոցիալ-դեմոկրատների, նարողնիկների շարժումներից և կամաց-կամաց էս մարդիկ դրանցով ոգևորվել են: Այսինքն մեր մտավորականությունը անկախ այն բանից, որ բոլշևիզմ էր հարում, կամ դաշնակցություն էր հարում, կամ հարում էր չգիտեմ մյուսները՝ հնչակյաններին, ռամկավարներին, բոլորի մեջ կար ա՛յո խանդավառությունը, որ մենք տեսնում ենք: Դրա համար այդքան բան եղանք՝ խոցելի եղանք մենք. մենք և ոչ միայն մենք, այլ ամբողջ տարածքը և ամբողջ ժամանակաշրջանը: Հիմա. հետո՝ էդ առաջին շրջանում: Այսինքն մենք կարող ենք ասել, որ քսանական թվականների վերջերին, մինչև երեսունական թվականների սկիզբը այդ համատարած խանդավառությունը կար, որ նույնը, որ Ստեփան Չորյանն էլ էր խանդավառված, ժամանակին Թումանյանն էլ էր խանդավառված, թեև բավական, ասենք, բան ունեին՝ հակասական զգացումներ են ունեցել: Ես չեմ խոսում Չարենցի, Տերյանի մասին, կամ, ասենք, դաշնակցական դեկավարների մասին: Նույնիսկ դաշնակցական դեկավարությունը իդեոլոգիապես խանդավառված էին: Այ, երեսունական թվականներին էր, որ դա դառնում է արդեն ի՞նչ՝ ոչ թե խանդավառություն, այլ՝ իներցիա: Այլ վախ, իներցիա և այլևս միզուցե... (Արա. - Բայց քառասունականներին նորից...) Այո: Եվ միզուցե... Այսինքն՝ այո... Միզուցե, միզուցե՝ վատ է, վատ է, բայց միզուցե սա պետք է էս բոլորի համար:

(**Նելլի.** – Միշտ կան օպտիմիստներ:) Ուրեմն. հետո գալիս է, փրկում է ինչը՝ փրկում է հայրենական մեծ պատերազմը, որովհետև հայրենական մեծ պատերազմը բերում է նոր խանդավառություն, որտեղ արդեն մահացած էր այն (հին) խանդավառությունը... դրանից հետո իջնում է կրկին... ուզում եմ պարզաբանել...

Մաշայի քույր. - Ես ուզում եմ համեմատական տանել ուղղակի, մեծ խանդավառությունը Ռուսաստանի և Հայաստանի...

1:37:27 **Հրանուշ.** – Ես ուզում եմ ավելացնեմ հարցս: Ինձ շատ հետաքրքիր է ձեր ընկալումը երևույթների ընթացքի, և չգիտեմ, ինչ աղբյուրների և տեղեկության վրա եք կառուցում հետազիծը, բայց հարցս հետևյալն է. ես թողնում եմ ռուսական սոցիալ-դեմոկրատիան մի կողմ, թողնում եմ Շուշիի, բայց հատկապես Թիֆլիսում և Բաքվում մեծացած հայ սոցիալ-դեմոկրատներին: Գանք Հայաստան: Այն մասը՝ Պոլիսը, այսինքն, նա այնպիսի ծանր քաղաքական վիճակում էր...

Անահիտ. - Պոլիսը եկավ այստեղ, Պոլիս չկա այնտեղ:

Գևորգ. – Գիտեք ինչ, երբ Մարքսը գրեց իր գործերը, հետո դրանք թարգմանվեցին այնքան լեզուներով, որ կարող էր կարդալ աշխարհի այս մասը, նրանք ովքեր կարդացին, աշխարհով մեկ նրանք «վարակվեցին», դա Հայաստանին չի վերաբերում: Դա վարակվել են չինացիները, բոլորը...

Նեյի. – Все назревало изнутри... Другое дело, что можно выносить приговоры... Тем, которые всё это затеяли... Это просто теория... На что хочешь можно направить...

1:38:43 **Վարդան.** – Ներողություն, ես ուզում եմ ասեմ, որ, օրինակ, երբ որ երրորդ ինտերնացիոնալը հիմնադրվեց, ուրեմն երրորդ ինտերնացիոնալի հիմնադիրների մեջ ոչ թե Թիֆլիսի ու Բաքվի հայ կոմունիստներն էին մասնակցում, այլ Վանի հայ կոմունիստներն էին մասնակցում երրորդ ինտերնացիոնալի հիմնադրմանը: Էդ կուսակցությունը կոչվում էր Արևմտյան Հայաստանի ազատագրման կուսակցություն...

1:39:10 **Հրանուշ.** – Հայաստանը չունեի էդ խանդավառությունը, ոչ էլ աճեց և հնարավորություն եղավ էդ խանդավառությունը աճեցնել. էս Հայաստանը լցված գաղթականներով: Հարյուր իննսուներկու հազար մարդ երկու տարում էստեղ մեռնում է:

1:39:41 – Փողոցներում, անտուն:

- Էս Հայաստանը հետո կոչվում է, թե էն բոլոր էջֆորիկ պատկերացումները Փարիզում ընթացող կոնֆերանսի, և սրան զուգահեռ հետո գալիս է քեմալական պատերազմը: Էդ բոլոր... Իրանք էին կոտորում էստեղ գտնվող թուրքերին... Էդ ի՞նչ սոցիալ-դեմոկրատական էջֆորիա կար էս Հայաստանում, որտեղ կամ մենք էինք կոտորում, կամ մեզ էին կոտորում, կամ...

1:40:07 **Վարդան.** – Ես համաձայն եմ ձեր հետ... Համաձայն եմ ձեր հետ:

Դավիթ. – Ժողովուրդ, էս Հայաստանը խուլ, մոռացված բան էր՝ ծայրամաս էր (– Այո) ռուսական կայսրության, որտեղ ոչ մի բան երբեք տեղի չէր ունենում:

1:40:20 **Հրանուշ.** – Ես միշտ ուզում եմ ասել՝ էստեղի Հայաստանը շատ դուրս է բոլորիդ օրինակից:

1:40:25 **Անահիտ.** – Բայց մի բան էլ տիկին Խառատյան: Շատ կարևոր բան ասեմ. մի բան էլ կա: Էստեղ շատ կարևոր բան ասեմ. մենք անընդհատ, երբ որ մենք մտածում ենք այսինքն էն մյուս՝ տասնիններորդ դարի և քսաներորդ դարասզբի Հայաստանի մասին, մենք ուզում ենք այս տեսակ Հայաստան պատկերացնել, այլ տեսակ Հայաստան պատկերացնել, բայց իրականում այդպես չի: Իրականում այս բոլոր տեղերը այնքան խառն էին, այսինքն նույնիսկ աշխարհագրական, գիտական, մշակութային... միասնություն չկար... Թիֆլիսն էլ էր ինչ-որ տեղ Հայաստան... Պոլիսն էլ էր ինչ-որ տեղ Հայաստան...

1:41:46 **Գևորգ.** – Ես իմ վերաբերմունքը դրան ասեմ կարճ շատ. կա ռուսահայ, տասնիններորդ դարի վերջի-քսաներորդ դարի սկզբի ռուսահայ մտավորականի կերպար: (1:41:54 – Բա պոլսահա՞յ): Ես հիմա իմ վերաբերմունքն եմ ասում: Ուրեմն՝

Էդ մտավորականի կերպարի՝ դրա մեջ ես տեսնում եմ ինչ-որ սոցիալական օրինաչափություններ. Է՛դ կատեգորիան, որտեղ էլ նա լինի՝ Պետերբուրգ, թե Մոսկվա, թե Ռոստով, թե Պոլիս, որ... Բայց ռուսահայ՝ մտավորականներ, որովհետև իրանք գնում-գալիս են հա՞: Նա կարող է լինի դաշնակցական, կարող է լինի սոցիալիստ. Բայց էդ կերպարը կա, որի մի քիչ աղավաղված տարբերակը ես արտացոլել եմ հենց էդ սիմվոլում, որ էդ բաներն են կայցրած, հա՞՞ դիպլոմները: Պատին կպած: Էդքանը կարամ ասեմ, էն մնացածներին ես լավ չեմ զգում-հասկանում...

1:42:37 **Հրանուշ**. – Ես հարցը տամ, որ դուք ձեր դատողությունը նաև սրա վրա տարածեք...

1:42:41 **Անահիտ**. – Ուղղակի սրա համար, տիկին Խառատյան, իմ աշխարհի ամենասիրելի տիկին Խառատյան...

1:42:48 **Դավիթ**. – Բոլոր էս երկրի Խառատյաններից ամենասիրելին դու ես (Ծիծաղ):

1:42:56 **Անահիտ**. – Դրա համար ինձ համար, երբ ես իմ դասախոսությունների ժամանակ խոսում եմ այս բոլորի մասին՝ ես ասում եմ «ռուսահայ իրականություն» և «արևմտահայ իրականություն»: Այսինքն՝ այս հայ իրականություն նախ, որովհետև այնտեղ կա ահռելի սփյուռքը՝ գաղութները՝ սփյուռք չասենք, և ռուսահայ իրականություն, որը արդեն պարզ է, դուք գիտեք, էդ Մոսկվան է, Թիֆլիսը... և կա արևմտահայ իրականություն...

- Իսկ պարսկահա՞յր:

Գևորգ. – Պարսկահայը ռուսահայի հետ շատ մոտիկ է:

Անահիտ. – Այո, պարսկահայը ռուսահային է մոտիկ:

1:43:35 **Հրանուշ**. – Իմ ասածի հարցը. ես որովհետև շատ կարևոր իմ համար խնդիր եմ բարձրացնում: Հարցս. ուզում եմ հասկանամ. խորհրդայնացումից հետո... որովհետև դաշնակցական Հայաստանը շատ տարբեր բան էր: Ոչ լավ, ոչ վատ հիմա չեմ խոսելու՝ լիքը վատ էլ կասեի, որոշ լավեր էլ կասեի: Բայց Խորհրդային... Խորհրդային Հայաստանը, որին, վերջիվերջո, սցենարը՝ աշխատանքը, վերաբերում է, այս աշխատանքը: Ի՞նչ չափով է իսկապես էդ ռուսահայ միջինացված մենտալության և խորհրդային իրողությունների՝ դեռ կարծրատիպերի չվերածված, շատ սու՛ր, շատ ընթացի՛կ, ոչ միշտ գնահատված, ոչ միշտ ընկալված... այսինքն գալիս ենք Հայաստան: Էս Հայաստանի բնակչությունը շատ հեռու է բոլոր բաներից: Ընդհանրապես իրան ինչ ասում են՝ ձայնը կտրած, տեղում վախեցած մարդիկ են: Եվ ուրեմն՝ մի հարյուր, երկու հարյուր անձ ի վերջո տնօրինում է էս մարդկանց ճակատագիրը:

1:44:43 **Գևորգ**. – Իմ կարծիքով, լեզենդը՝ միֆը, շատ լավ արտահայտված է «Մյասնիկյան» ֆիլմում՝ «Վերածնունդ» ֆիլմում: Էդ երկու հարյուր հոգին էլ, այ էն սիրուն Նոնան՝ Շուշանիկ Կուրդինյանը իրա ռուսալեզու «Եղիշ ջան, արի մի հատ ծխենք»՝ իրանք, էդ ռուսահայ էլիտան է եղել, որը մեծ մասամբ գրավել է սովետական իշխանությունը Հայաստանում (- Հա, դա էլ նշենք) ու ինքն է տնօրինել ճակատագրերը՝ լավ, թե վատ, էդքան բան:

1:45:19 **Վարդան**. – Ես մի բան ասեմ, շատ եմ խնդրում: Քանի որ ես գյուղացիական ծագում ունեմ ու արևմտահայ գյուղացիությունից եմ, ընդ որում Շատախից, որ լեռնային մաս է... Ուրեմն՝ շատ հետաքրքիր է հետևյալ բանը: Քանի որ հայկական մտավորականությունը ձևավորվել է Թիֆլիսում, Բաքվում ու Պոլսում, այսինքն՝ կոսմոպոլիտական միջավայրում, իրա մտածողությունը լիբերալ-կոսմոպոլիտական է եղել: Ուրեմն՝ իրենք ընդհանրապես չեն իմացել (և Մուրացանը էստեղ երևի ճիշտ է՝ շատ էդպես խիստ պահպանողական գրող), որ իսկապես դրանք տարբեր կարծես թե շերտեր են: Լեռն գրեց, որ էդ հեղափոխականները իրենց ներկայացնում էին թիֆլիսահայ և Բաքվի կամ Շուշիի մտավորականներ: Նույն էլ, այսինքն գծեց այդ մեծ խզումը, որ գոյություն ունեք, Սահարին «Այրվող այգեստաններ»-ում: Դա մեծ խնդիր էր, որը իսկապես էլի ես տեսնում եմ, որ Չարենցն էլ էր տեսնում, որ գոյություն ունի ֆանտաստիկ մեծ խզում: Եվ մինչև հիմա էլ... Իմիջայլոց դա դրսից եկողներն են ասում, և ասում են, որ հայ մտավորականության մեջ կա էսպիսի մի հատ սովորություն, ասել «հայ ժողովուրդը»: Նու, պարզ է, քանի որ ինքը մտավորական է՝ ինքը հայ ժողովուրդ չէ, ժողովուրդն էն Ապարանի ոչխարներն են մոտավորապես: Կամ ասել «նրանք», ոչ թե «մենք», և այլն: Ժողովրդի մասին իրանք «նրանք» բառն էին օգտագործում: Ինչու՞ որովհետև իսկապես շատ երկար ժամանակ... Նալբանդյանը, որ գրել է «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ», ոչ մի անգամ Հայաստանում չի եղել: Մոտիկ չի եկել Հայաստանին: Հա: Դա շատ հետաքրքիր է: Եվ օրինակ Բաֆֆին մեծ խղճի խայթ էր զգում, որ էդքան գրում է Հայաստանի մասին՝ ոչ մի անգամ Հայաստանում չի եղել: Ու էդ ճանապարհորդությունը, որը մի անգամ անցավ Հայաստանում, կարևոր էր, որ համոզվի՝ էնտեղ մարդ կա... Հա, դա իսկապես մեծագույն պրոբլեմ է: Հայ մտավորականների մեծամասնությունը Փարիզում եղել է, Լոնդոնում եղել է, մյուս տեղ եղել է, բայց օրինակ կարող եմ ասել՝ Վանում չի եղել, չեմ ասում Շատախում... Եվ չեն եղել, և էդ մասին մենք պետք է հասկանանք, որ մեր մտածողությունը...

Գևորգ. - Վարդանը ասեց անցյալի մասին, որ չէին ճանաչում, կոպիտ ասած, ֆիզիկապես: Բայց իմ համար սա ավելի շուտ մետաֆիզիկ խնդիր է: Դուք (Անահիտ) արդեն ասում եք նրա մասին, որ էսօ՛ր չեն ճանաչում, և դա ոչ թե ֆիզիկապես չճանաչելու հարց է: Նույն ձևի, Մուսաննան հիմա, որ գնաց, ինքը իրա վեպը, եթե կարդաք, դա Վարդենիսի մոտ գտնվող գյուղի մի պատմություն է շատ հետաքրքիր, կոչվում է «Ագռավները Նոյից առաջ», հա՞. ցեղասպանությունից փախած մարդկանց

մասին է, և եղ ժողովուրդը էս հենց էն է, որ արդեն նշվեց էստեղ, որ... եղ էլ ասեցիք... որ իրանք... իրանք չէին կարող ոչ խանդավառություն ունենալ, ոչ... Եվ եղ բոլոր կղզյակները հիմա էլ է, էսօր էլ է էստեղ: Նույն վիճակն է. ոչ թե ֆիզիկապես չճանաչելու կարողությունը, այլ ինչ-որ բանը, որ ասում է՝ դիսկուրսը չկա, տեքստը չկա, չի արտադրվում:

1:49:46 **Վարդան.** – Կներես, որ խանգարում եմ. ուրեմն՝ ինձ մոտենում է «Միվիլներ»-ի լրագրող ընտրությունների ժամանակ և ասում է. «Մեր մոտ սարսափելի բան է կատարվում»: Ուրեմն՝ ես փորձում եմ հասկացնել, որ «Եթե էսպես տարվի, ասենք թե, եղ ամբողջ բանը՝ դուք կպարտվեք»: «Չէ, ի՞նչ եք ասում, մենք քսան տոկոսը մեր գրպանում ունենք»: Ուրեմն՝ դա ցույց է տալիս, թե Վարդան Օսկանյանը ու Բաֆֆի Հովհաննիսյանը որքան են հասկանում մեր ժողովրդին. «Քսան տոկոս գրպաններս ունենք»:

1:50:19 **Հրանուշ.** – Պարոն Ջալոյան, Բաֆֆիին բոլորս աշխատեցինք հասկացնել:

1:50:21 **Արա.** – Ընկերներ ջան, մենք կրկնում ենք ռուս ինտելիգենցիայի տասնիններորդ դարի առանցքային սխալը...

1:50:34 **Վարդան.** – Օրինակ ասենք թե շատ հետաքրքիր մի բան է էլի: Էդ օրինակն եմ բերում, որովհետև դրանով եմ զբաղված: Ուրեմն էսպես է. իմ ընկերը գնաց Մոսկվա սցենարիստ աշխատելու: Եվ հիմա ինքը գնացել է էնտեղ սցենարիստ աշխատել, բայց ինքը խոպանչի չի: Իսկ եթե ինչ-որ մեկը գնաց էնտեղ ասֆալտ փռելու՝ ինքը խոպանչի է. բայց ինքը խոպանչի չի: Եթե մարդ գնացել է Փարիզում սովորում է՝ ինքը խոպանչի չի, բայց եթե օրինակ մարդը գնացել է, շինարարությամբ է զբաղվում՝ ինքը խոպանչի է: Այսինքն՝ ինքը...

1:51:10 **Արա.** – Փարիզում՝ ոչ (ծիծաղ):

1:51:18 **Վարդան.** – Ինքը արդեն գաստարբայտեր չի, ասենք թե բանն է էլի՝ խոպանչի է, խոպանչի չի՝ գաստարբայտեր է: Կներես էլի: Ուղղակի ինքը արդեն ավտոմատ կերպով ստիգմատիզացման է ենթարկվում, մենք էլ նրան... ես դրա մասին էի ասում...

1:51:32 **Հրանուշ.** – Հիմա, եթե վերադառնանք խանդավառությանը: Եթե վերադառնանք խանդավառության թեմային. Արան ինձ միանգամից լռեցրեց, և ես լռեցի իսկապես, հենց մենակ Մարյանի ազգանունը տալով՝ կարճ: Չարենցինը դեռ կարելի է վիճարկել. երեսունական թվականները Չարենցի համար շատ հետաքրքիր ստեղծագործական, բայց միևնույն ժամանակ բոլորս գիտենք ինչ ծանր անկումային շրջան էր: Բայց հետո կար քսանական թվականներին, երեսունչորս թվին... երեսունչորսին քանդված, բայց դեռ հույս կար, քննարկումներ էին անում, գրողների միությունը կար և այլն: Երեսունչորս թվից հետո դե պարզ է արդեն ամեն ինչ գնաց *коту под хвост*, սարսափելի ձևով: Հիմա ինձ իսկապես հետաքրքրում է, օրինակ Մարյանը ո՞նց կարողացավ ստեղծագործել: Իսահակյանը. Իսահակյանի ֆենոմենը:

Եվ դարձավ... Բարեկամուհիս էստեղ տեղից ինձ փսփսալով ասում է. «Ի՞նչ կապ ունի էդ բոլորը Հայաստանի և հայերի հետ. Հայաստանի բնակչության չասեմ...»:

1:52:36 **Անահիտ**. – Իսահակյանը գրեց առաջին... Երկար դադարից հետո առաջին բանաստեղծությունը որ գրեց՝ պատերազմի ժամանակ և հանձնարարական՝ «Ազատություն» բանաստեղծությունը... Իսահակյանը ահագին ժամանակ չստեղծագործեց: Էդ ընթացքում...

1:52:47 – Հա, բայց... Բայց երեսունչորս-երեսունհինգին իրա վրա հանձնարարական կար...

Գևորգ. – Պապայի պատմությունները Սարյանի մասին:

1:52:56 – Ուղեկից գրողները... Ուղեկից գրողները հիմնականում հանձնարարական գործեր գրեցին:

1:53:00 **Լուսինե**. – Ընտանեկան պատմություն Սարյանի մասին:

Գևորգ. – Ընտանեկան պատմություն Սարյանի մասին: Երեսուներթ թվից ի վեր իրան զոռում են, որ ինքը նկարի Ստալինին: Ասում են. «Եթե չնկարես՝ քեզ...» - գիտե՞ք էդ պատմությունը:

Դավիթ. – «Մենք քեզ կնկարենք»:

Գևորգ. – Հա: Վերջը՝ զոռում են, զոռում, ինքը ամեն ձև փորձում է հրաժարվի, տեսնում է մի ձև վայր ժե... Հա, հետո ասում են. «Տղաներիդ կոչնչացնենք, ոչ թե քեզ»: Ասում է՝ ճար չունի: Ուրեմն՝ մանկական երկաթուղու այգին արդեն բացված էր, ու այնտեղ դրված էր Ստալինի մի փոքրիկ կիսանդրի: Ինքը նկարում է այգու էդ մասը որպես պեյզաժ, Ստալինի կիսանդրիով, հա՞: Էդ երեսուներթից մինչև ասենք քառասունմեկը: Քառասունմեկին տղային իրա տանում են պատերազմ՝ ռազմաճակատ, ու էդ պատճառով ինքը լռում է ու գրեթե ոչինչ չի նկարում ամբողջ պատերազմի ընթացքում, մինչև քառասունչորսին, եթե չեմ սխալվում, տղան հետ է գալիս սաղ-սալամաթ, գուցե վիրավոր, չեմ հիշում, ու ինքը սկսում է ծաղիկները նկարել պատերազմի հաղթանակին նվիրված:

1:54:05 **Վարդան**. – Ծաղիկների մասին հետաքրքիր բան պատմեմ. ուրեմն Դմիտրի Նալբանդյանը, որ ուղարկում են պատերազմի ժամանակ Հայաստան՝ սարյանիզմի դեմ պայքարելու, և հետո ինքը բան է անում... Նալբանդյանը գալիս է, և էդ մասին հիշողություններ է ինքը թողել՝ Ստալինին նվիրված էր, քառասունհինգ թվականի էդ ժողովածուի մեջ: Եվ շատ հետաքրքիր է. Նալբանդյանը, ուրեմն, պահանջում է, և որոշում են ընդունում, որ հարկավոր է պայքարել, ուրեմն, բուրժուական «չարի ծաղիկների» դեմ: Ուրեմն. Սարյանին նույնիսկ ծաղիկ չեն տալիս, որ նկարի, որովհետև այն բուրժուական չարի ծաղիկներ էին:

1:54:52 **Գևորգ**. – Բայց չանցավ էլի:

1:55:02 **Դավիթ**. – Ժողովուրդ, ես ձեզ էլի ուզում եմ տեքստին վերադարձնել: Տեքստում են անձնավորությունները, որ կան, գործում են, խոսում են, մեծ մասը մասնագետներ են, հա՞: Էս մասնագետները էդ ամեն ինչից հեռու են, իրանք իրանց գործով են զբաղված. մեկը նկարում է, մյուսը գրում է, երրորդը բուժում է: Եվ իրենք էդ գաղափարական բաների մեջ չկան: Իրանց ինչ-որ բան դուր է գալիս, ինչ-որ բան դուր չի գալիս, հա՞: Բայց իրանք հեռու են, իրանք էդ շերտի մեջ չեն: Իրենք փորձում են իրենց կյանքով ապրել, բայց «դաժան իրականությունը» և այլն, հա՞: Ու սա շատ կարևոր է: (Նելլի. – Ասում էին. անկախ նրանից, ինչ պայմաններ են, ինչ են, մարդ պիտի անի էն, ինչ համարում է որ ճիշտ է ու կարելի է:) Ես էլ մի հատ ընտանեկան պատմություն ունեմ. իմ տատիկը ամենափոքր երեխան էր իրենց մեծ ընտանիքում՝ յոթերորդն էր: Առաջին վեցը աշխարհով մեկ՝ Եվրոպայում հիմնականում, սովորում էին: Մի մասը երիտասարդ մահացան պատերազմի հետևանքով: Բայց, ուրեմն, Ցյուրիխի համալսարանում սովորում էր տատիս եղբայրը՝ Հակոբը, որը էստեղ մի կնոջ ծանոթանում է, ամուսնանում են, ավարտում են: Եվ տասնութ թվականին՝ տասնինը թվականի սկզբին, ավելի ճիշտ, վերադառնում են Հայաստան:

1:56:37 **Նունե**. – Էնպես որ Ցյուրիխը խոպան չի:

- Հա: Վերադառնում են Հայաստան...

Լուսինե. - Խոպան են հետ գալիս:

1:56:43 **Վարդան**. – Կներեք, եթե մշեցին գնացել է Ցյուրիխ...

1:56:46 – Պապիկը էն ժամանակ Երևանում թվով երրորդ ինժեներն է եղել՝ ուրիշ ինժեներ չի եղել. երեք ինժեներ է եղել: Իսկ Աննա տատիկը կոնսերվատորիայի հիմնադիրներից մեկն է: Էսպես պրոֆեսիոնալները, ինչ-որ մարդիկ, ազգայնական զգացմունքներից ելնելով, գալիս են Հայաստան: Ցեղասպանությունը իհարկե հսկայական ազդեցություն ունի: Իսկ Հայաստանում ի՞նչ է՝ Հայաստանում ոչի՛նչ է, ոչինչ չկա: Հրանուշ, դու՛ նկարագրեցիր: Ու էն մարդիկ, ով որ էստեղ են ապրում՝ էստեղ են փախել, եկել. յոթ հարյուր հազար բնակչություն կա ընդամենը: Սրանք հազիվ հանգիստ տեղ են գտել՝ հազիվ հանգիստ տեղ են գտել ու ապրում են ու բոլորը հայերեն են խոսում, հա՞ (Նունե. – Էդ հաստատ չի): Ու... Ես չեմ ասում էն մտավորականության (զգվելի բառ է, տանել չեմ կարողանում) ներկայացուցիչներին, որոնց մասին Գևորգն էր ասում՝ ռուսահայկական, ռուսահայ, որոնք իրենց շատ փակ շրջանակը ունեին: Որոնք իհարկե մեծ մասը գնաց, որովհետև հենց կերակրվում էր, հա՞, բայց էն ժողովուրդը, որը որ ապրում էր, ինքը հազիվ սկսել էր բազմանալ: Հարմար, կոմֆորտային պայմաններ էր գտել:

1:58:27 **Հրանուշ**. – Ո՞ր թվերին:

Արա. - Հիմա ինչի՞ չի բազմանում:

- Հիմա կոմֆորտային չի:

- Ինչի՞ կոմֆորտային չի:

Լուսինե. - Հիմա գնում է ուրիշ տեղ բազմանա:

Դավիթ. - Ես թվերով եմ խոսում՝ յոթ հարյուր: Յոթ հարյուր հազար էր, չէ՞:

1:58:41 **Հրանուշ.** - Դավիթ, ես քեզ հետ ցավոք համաձայն եմ: Էս, որ ասում եմ...

Դավիթ. - Ցավոքը ո՞րն է՝ էդ է: Բայց հասկանում ես, դուք խոսակցությունը տանում եք բոլորովին ուրիշ տեղ:

1:58:53 **Հրանուշ.** - Հա բա:

1:58:58 **Դավիթ.** - Տեքստը ուրիշ է, տեքստը իրա ուրիշությամբ է թանկ: Էս շատ կարևոր է:

Հրանուշ. - Բա հազիվ առիթ են տվել մեզ...

Դավիթ. - Խոսել: Ու ես իմ հավաքական, եզրափակիչ խոսքն եմ ասում, ինձ համար, ոչ թե բոլորիս, և ուզում եմ ուղղակի շնորհավորել մեզ, որ մենք ունենք լուրջ, էսպես, հուզող, մտածեցնող ու մնացող, հա՞. հիշողության մեջ մնալու է էդ տեքստը: Ասենք գիրք կա, որ ես տասնութ տարեկանից հետո չեմ կարդացել, բայց էդ գիրքը իմ մեջ է: Էս գիրքը իմ հետ է լինելու, և ես դրա համար շատ շնորհակալ եմ:

1:59:49 **Նունե.** - Փաստորեն կենացների անցար:

Դավիթ. - Կենաց չի: Սա վերջնական իմ, անձնական...

1:59:54 **Լուսինե.** - Իսկ իրա հուշարձանության էլեմենտ կա՞:

2:00:00 **Դավիթ.** - Ը՛հ... Ուրեմն՝ հուշարձանության էլեմենտ (- Արձանը չկա, բայց հուշը կա) կա իհարկե, որովհետև, հասկանալի է, որ Գևորգը... իր հորն է, հա՞, էս հուշարձանը դրել է: Բայց ես դրանով սկսեցի էսօրվա իմ խոսքը: Ինքը շատ սիրում է էդ... էդ «վատը»... Հա՞, էդ ամբողջ պատմությունները... Ինչի՞: Որովհետև էդ իրա ընտանիքի ներսն է, որը ինքը ցույց է տալիս: Մեզ է նվիրում: Մեզ է նվիրում իրա ծնողների խոսակցությունների իր ընկալման մի էսօրվա ռեֆլեքսիայի միջոցով ստեղծված տեքստով՝ էն ժամանակը, որը բացարձակապես էն ժամանակվա մասին չի: Հա՞: Էն ժամանակվա մասին էլ ա: Լավ հարց ես տալիս, էդ հուշարձան է ինչ-որ չափով:

2:01:02 **Հրանուշ**. – Ես կարծում եմ՝ հիանալի է, և սա առաջին դեպքը չի, որ Գևորգը իր միջավայրի, իր ընտանիքի միջավայրի, իր կերպարների, բայց ավելի շուտ ես կասեի դեպքերի այդ, իրան շատ անգամ հաջողվում է նույնիսկ խուսափել էդ իրան հարազատ մարդկանց կերպարների բնութագրերից: Ինքը դեպքերի միջոցով է անցնում: Էդ դեպքերը լինելով մոտ, հարազատ, հասկանալի, պատմված, վերապատմված, կայունացած, կաղապարված՝ շատ մոտ են այն օբյեկտիվ իրականությանը, որին ինքը անդրադառնում է: Շատ... Ես սա համարում եմ հեղինակային մեծագույն հնարավորություն: Իրավունքը հարցերի կողմն է, բայց մեծագույն հնարավորությունը՝ եթե հեղինակը կարողանում է մի տասնհինգ մարդու տարբեր բաների միջոցով, ըստ տարբեր ժամանակների և կոնկրետ իրավիճակների վերադարձնել, ի վերջո լավագույն, ժամանակաշրջանի լավագույն դրսևորումը անհատի կամ ընտանիքի միջոցով է հաջողվում մասսայականացնել: Պատմության վերլուծությունը մի բան է, բայց ժամանակաշրջանի ոգին, իրավիճակը տալը և հասցնելը, տալը էական չի՝ հասցնելը, որ մարդիկ ընկալեն, շատ ավելի մարդու, անհատի կամ փոքր խմբի, ընտանիքի միջոցով է: Լավագույն լուծումները միշտ էդպիսին են:

2:02:28 **Վարդան**. – Ես կարող եմ ասել, որ շատ, շատ լավ է տրված հատկապես: Ոչ թե ասենք թե, ասում եք, ասենք թե, սյուժետային կողմը, որ սա ընտանիքի պատմություն է, բայց իմ համար, ասենք թե, դա էական չէ: Ու ես հանկարծ, ասենք թե, զգացի... զգացի, թե ի՞նչ բան է հայ մտավորականը ու մեր դասական սովետական մտավորականությունը...

2:03:12 – Ինձ թվում է՝ ամենամեծ հաջողությունը դա է, որ ես զգացի... զգացի, ասենք թե՝ ո՞նց է մտածում հայ մտավորականը: Իսկապես, որովհետև դա ուղղակի, այդ փոխհասկացումը, որովհետև ընտանիքը դա միջոց է միայն, որպեսզի ինքը ցույց տա, թե ի՞նչ բան է, ասենք թե, հայ մտավորականը. իրա թերություններով, իրա, կներես, թուլություններով կամ իրա ուժով հանդերձ, որովհետև այսօր մենք շատ ենք քննարկում էդ հարցը. ինչու՞ է այդքան թույլ մտավորականությունը կամ ինչու՞ է, ասենք թե, էստեղ սխալվում կամ էնտեղ սխալվում: Իմ համար դա է ամենակարևորը: Բայց քանի որ ինքը ու իրա ստեղծագործությունը բաց ստեղծագործություն է, բաց է ամեն տեսակ ինտերտեքստուալության, ինքը քանի որ սարքված է որպես, ասենք թե, ոչ թե... հենց իրա կինոյի ձևը, ասենք թե, հղում է տալիս, որպեսզի քննվեն էդ առնչությունները, որովհետև լուսանկարը, գիտեք, ասենք թե, հազար ու մի մեկնաբանություն կարող է լինի՝ ինչ է արած, պատկերված: Իրականում առանց մակագրության լուսանկարը անհասկանալի է, թե ինչի մասին է. կինոյից հատված է, թե... Այսինքն՝ սարքված է, թե փաստ է: Էս առումով, ասենք թե, էդ առավելությունները կան, բայց ինքը շատ մեծ խոսակցություն է բացում, և՛ հիշողության մասին, և՛ դարաշրջանի մասին: **Ամենակարևորը հետևյալն է. իրանք ապրել են էդ դարաշրջանում, մենք էլ ենք ապրում ինչ-որ դարաշրջանում: Մե՞նք ինչ**

դարաշրջանում ենք ապրում: Ինչպիսի՞ն է, օրինակ, ասենք թե, ոնց են ասում, մտավորականության ճակատագիրը քսանմեկերորդ դարում: Օրինակ:

2:05:03 **Ղավիթ**. – Մի հատ լավ անեկդոտ կար... Բրեժնև. Мелкий политический деятель эпохи Аркадия Райкина.

- Հա, Պուգաչովայի մասին էլ կար...

2:05:06 – Միգուցե անցնենք, էնտեղ շարունակենք...

2:06:29 – Ես ձեր պիեսը տեսել եմ, տիկին: Կներեք, ձեր անունն էլ չեմ հիշում (- Անահիտ): Շատ հաճելի է. ես ձեր պիեսին եղել եմ: - Ո՞ր մեկին:

- Մեր և ձեր նախնիները Իրանից են: